# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հեռակա ուսուցում 1721 թողարկում

**Կառավարման ամբիոն**

ՀՀ համաշխարհային մրցունակության դիրքերի բարելավման ազդեցությունը գործարար միջավայրի միջազգայնացման վրա

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

«Կառավարում» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար

Կրթական ծրագիր՝ **«Հանրային կառավարում»**


**Մագիստրանտ՝** Մովսեսյան Քրիստինե Արտավազդի

**Ղեկավար՝** Գաբրիել Միքայելի Միքայելյան, տ.գ. թ. դոցենտ

**Ամբիոնի վարիչ՝** Վիլեն Վիկտորի Խաչատրյան, տ.գ. թ. դոցենտ


**Երևան 2020**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.......................................................................................................3

Գլուխ 1.Երկրի մրցունակության և գործարար միջավայրի տեսամեթոդական հիմքերը և դրամց բարելավման միջազգային փորձը.......................................................................5

1.1. Երկրի մրցունակությունը և դրա գնահատումը..............................................5

1.2. Գործարար միջավայրը և դրա գնահատումը.................................................10

1.3. Ներդրումային միջավայրի բարելավման և տնտեսության մրցունակության բարձրացման զարգացող երկրների փորձը.........................................................17

Գլուխ 2. ՀՀ տնտեսության մրցունակության և գործարար միջավայրի արդի վիճակը և առկա հիմնախնդիրները...............................................................................28

2.1. ՀՀ տնտեսության մրցունակության ցուցանիշները: ...........................................28

2.2. ՀՀ տնտեսության գործարար միջավայրի գնահատումը և հիմնախնդիրները...35

Գլուխ 3. ՀՀ համաշխարհային մրցունակության դիրքերի բարելավումը, որպես գործարար միջավայրի միջազգայնացման հիմք..................................................56

3.1. ՀՀ մրցունակության բարձրացմանը նպաստող գործարար միջավայրի բարելավման ուղիները:..........................................................................................56

3.2. ՀՀ ներդրումային միջավայրի բարելավումը, որպես համաշխարհային մրցունակության բարձրացման վրա ազդող հիմնական գործոն:...........................66

Եզրակացություններ և առաջարկություններ..........................................................82

**Օգտագործված գրականության ցանկ** ....................................................................86

Հավելվածներ

# Ներածություն

*Թեմայի արդիականությունը:* Աշխարհում չկա այնպիսի երկիր, որը կարողանա զարգանալ առանց այլ երկրների հետ տնտեսական կապերի և համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու: Հետևապես երկրի մրցակցային միջավայրի ու գործարար միջավայրի միջազգայնացումը առաջնային նշանակություն ունեն յուրաքանչյուր պետության համար: Հայաստանի պես փոքր, ոչ այնքան շատ ռեսուրսներով, ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքով, դեպի ծով ելք չունեցող երկրի համար օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում առանցքային դեր ունի բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման գործում: Օտարերկրյա ներդրողներն իրենց ներդրումները կատարելուց առաջ ուսումնասիրում են երկրի մրցակցային ցուցանիշները, գործարար միջավայրը, քաղաքական վիճակը և մի շարք ասպեկտներ հաշվի առնելով կատարում են իրենց որոշումը: Համաշխարհային մրցունակության դիրքերի բարելավում և առավել բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումն արդի հիմնախնդիր է ՀՀ տնտեսության համար և երկրի զարգացման գլխավոր ասպեկտներից մեկը: Սրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

*Հետազոտության նպատակը:* Հետազոտության նպատակն է բացահայտել մրցունակություն և գործարար միջավայր հասկացությունները, դիտարկել միջազգային փորձը և առանձնացնել ՀՀ տնտեսության մեջ կիրառելի ասպեկտները, ինչպես նաև վերհանել ՀՀ գործարար միջավայրում առկա բացերն ու առաջարկել լուծումներ, դիտարկելով միջազգային վարկանշային աղյուսակներում ՀՀ դիրքերը, դիտարկել օտարերկրյա ուղղակի ներդրումների դերը ՀՀ գործարար միջավայրն առավել բարենպաստ դարձնելու գործում և առաջարկել լուծումներ ՀՀ մրցունակության բարելավման համար:

*Հետազոտության օբյեկտը և առարկան:* Հետազոտության օբյեկտը ՀՀ գործարար միջավայրն ու մրցունակությունն է, իսկ առարկան՝ ՀՀ գործարար միջավայրի միջազգայնացումն ու մրցունակության դիրքերի բարելավումը:

*Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:* Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել գործարար միջավայրի և

մրցակցության վերաբերյալ տարբեր տնտեսագետների կողմից լայն կիրառություն ունեցող հրապարակումներն ու աշխատությունները, ինչպես նաև առաջադրած վերլուծական դրույթները: Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են ԱՎԾ-ի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և այլ նախարարությունների ու կից կառույցների պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, Doing business-ի, ՏՀԶԿ-ի և այլ կառույցների կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը, զեկույցները:

*Հետազոտության կառուցվածքը:* Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակցություններ և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, բաղկացած է 90 էջից՝ առանց հավելվածների:

# Գլուխ 1.Երկրի մրցունակության և գործարար միջավայրի տեսամեթոդական հիմքերը և դրամց բարելավման միջազգային փորձը

## 1.1. Երկրի մրցունակությունը և դրա գնահատումը

Մրցունակությունը շուկայական համակարգի անբաժանելի բաղադրիչն ու զարգացման գլխավոր ուժն է: Այն սահմանվում է, որպես կազմակերպության, ճյուղի կամ ազգային տնտեսության կարողություն՝ ապահովելու կայուն առաջընթաց, եկամուտների ու աշխատավարձի բարձր մակարդակ և բնակչության բարձր կենսաակարդակ՝ մնալով բաց միջազգային հանրության համար:[1]

Մեկ այլ սահմանմամբ, մրցունակությունը ապրանքի կամ ծառայության այն հատկությունն է, որը բնութագրվում է շուկայում ներկայացված այլ նմանատիպ ապրանքների համեմատությամբ կոնկրետ պահանջարկի իրական կամ հնարավոր բավարարման աստիճանով: Այն շուկայում նմանատիպ ապրանքների մրցակցությանը դիմակայելու բնութագրիչն է [2]:

Մրցունակությունը բարդ տնտեսական կատեգորիա է, որը կարող է դիտարկվել մի քանի մակարդակներում:

[1] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf
[2] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf

Աղյուսակ 1.

Մրցունակության մակարդակները[3]

| *Մրցունակության մակարդակ* | Մրցունակության օբյեկտ կամ սուբյեկտ | *Մրցունակության գործոններ* |
|---|---|---|
| *Ապրանքային* | Ապրանքներ, ծառայություններ | ✓ Արտադրանքի/ծառայության որակ, համապատասխանությունը նորմերին ու ստանդարտներին,<br>✓ Գին, համապատասխանությունը սպառողական պահանջներին: |
| *Միկրոմակարդակ* | Արտադրող, ծառայություններ մատուցող | ✓ Արտադրանքի/ծառայության հարաբերական մրցակցություն<br>✓ Գործունեության ֆինանսական ցուցանիշներ |
| *Մեզոմակարդակ* | Կազմակերպություններ միավորումներ | ✓ Ճյուղի ներքին կառուցվածքը<br>✓ Արտաքին միջավայրի ազդեցություն |
| *Մակրոմակարդակ* | Ազգային տնտեսություն, երկիր | ✓ Ներդրումային միջավայր<br>✓ Գիտատեխնիկական մակարդակ<br>✓ Արդյունաբերության և առանձին ճյուղերի մրցունակության աստիճան: |

Երկրի կամ կազմակպերպության ունակությունը առաջարկել ապրանքներ և ծառայություններ, որոնք համապատասխանում են որակի համաշխարհային և տեղական չափանիշներին և մրցունակ գներին՝ ապահովելով բավարար եկամուտներ կոչվում է մրցունակություն[4]:

Տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության գնահատման համար օգտագործվող ամենակարևոր բնութագրիչներից մեկը մրցունակությունն է:

[3] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf
[4] http://www.businessdictionary.com/definition/competitiveness.html

Ըստ Grandars պարբերականի երկրի մրցունակությունը.

- Համաշխարհային շուկայում մրցակիցներից ավելի շատ նյութական բարիքներ արտադրելու կարողությունն է:
- Սպրանքներ և ծառայություններ արտադրելու հնարավորությունների մակարդակը արդար և ազատ շուկայի պայմաններում:
- Տնտեսական հնարավորությունը՝ վճարել ստացված միջոցների դիմաց
- Համաշխարհային շուկաների պահանջներին համապատասխան և պետական ռեսուրսների արագ աճին նպաստող պայմաններ ստեղծող ապրանքներ և ծառայություններ արտադրելու երկրի հնարավորությունը, որը թույլ կտա ապահովել համաշխարհային պայմաններին հասարակության կյանքի որակի համապատասխանեցում և ՀՆԱ-ի կայուն աճի տեմպ [5]։

Երկրի մրցունակությունը որոշող գործոններից են.

- տնտեսության դինամիկան,
- շուկայի դինամիկան
- երկրի ֆինանսական համակրգի աճը,
- մարդկային ռեսուրսները
- պետության դերը[6] :

Ոչ մի պետություն չի կարող մրցունակ լինել բոլոր ճյուղերում, հետևապես յուրաքանչյուր երկրի մրցունակության կառուցվածքը տարբեր է: Երկրների ներքին պայմանները կոնկրետ դեպքերում առավել դինամիկ են և հեռանկարային, այդ իսկ պատճառով նրանք հասնում են հաջողության կոնկրետ ճյուղերում: Ազգային տնտեսության մրցունակությունը դրսևորում է վառ ազդեցություն մակրո մակարդակում, ի տարբերություն արտադրանքի, ապրանքի, ձեռնարկության մրցունակությանը, որոնք ազդում են միկրո մակարդակում:

---

[5] http://www.grandars.ru/college/ekonomika-firmy/konkurentosposobnost-strany.html
[6]http://www.grandars.ru/college/ekonomika-firmy/konkurentosposobnost-strany.html

Պետության միջոցառումները, որոնք ուղղված են երրի մրցունակության պահպանմանն ու բարձրացմանը, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- Ենթակառուցվածքներ, հմուտ աշխատուժ, գիտատեխնիկական առաջընթաց և այլն:
- Քաղաքական արդյունավետ որոշումների կայացում, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն, շուկայի կարգավորման գործընթացում կոլեկտիվ բանակցությունների անցկացում:
- Պետական գնումներ, պահանջարկի խթանումն առավել վաղ շրջանում, ներքին մրցակցության և նորամուծությունների խթանում:
- Արտադրական գործընթացի կարգավորում, անորակ արտադրանքը շուկայից դուրս մղելու տեխնոլոգիական և տեխնիկական չափանիշներին համապատասխան համակարգի մշակում:
- Հաճախորդներին հավաստի և ամբողջականտեղեկատվության տրամադրում:
- Տեխնիկական ստանդարտների ներդրում:
- Քաղաքական կապեր և այլ երկրներից օգնություն:
- Կլաստերների ձևավորում: Ըստ Պորտերի՝ պետք է ստեղծել ուղղահայաց ինտեգրացիոն կառույցներ, համախմբել տարբեր տեխնոլոգիական շղթաների անդամներին՝ սկսած հումքի մատակարարներից մինչև պատրաստի արտադրանք արտադրողները:
- Տարածաշրջանային քաղաքականություն, մասնավորապես՝ խթանել հետամնաց տարածաշրջանների զարգացումը:
- Երկրի մրցունակության կարգավորում:
- Առևտրային քաղաքականության մշակում:
- Օտարերկրյա ներդրումների խթանում[7]:

[7] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf

Գինն ու որակը մրցունակության հիմքն են: Սրանից եզրակացնելով կարելի է հետևյալ կերպ ներկայացնել մրցունակության բանաձևը՝

*Մրցունակությունը = որակ + գին + սպասարկում*[8]

Ապրանքի (ծառայության) ընդհանուր մրցունակության գործակիցը ( $\gamma i$ ) հաշվարկելու համար որակի բարձրացման գործակիցը( $\Delta\theta i$ ) անհրաժեշտ է բազմապատկել ինքնարժեքի փոփոխության գործակցով ($\Delta Gai$ ):

$$\gamma i = \sum_{i=1}^{n} \Delta\theta i * \Delta Gai$$

Այնուհետև հարկ է որոշել գնի և որակի համակցման գործակիցը (Ki)՝ առաջարկվող գինը (Ci) հարաբերելով ընդհանուր մրցունակության գործակցին[9].

$Ki=\frac{Ci}{\gamma i}$

Մրցունակության գործոնների գնահատման մեթոդաբանությունը կարելի է դիտարկել 2 տեսանկյունից՝ քանակական և որակական: Քանակական մեթոդի դեպքում երկրի մրցունակության մակարդակը և աստիճանը գնահատվում են գործոնների հատուկ համակարգով և համապատասխան մեթոդաբանությամբ, որոնք ներկա պայմաններում բավականին շատ են: Որպես կանոն, գնահատման ժամանակ կարելի է օգտագործել գործոնների որոշ խումբ, մասնավորապես.

- բնակչության կենսամակարդակը,
- ներդրումների ներգրավման մակարդակը,
- ռեսուրսների արդյունավետ օգտագործման մակարդակը[10]:

Հետևյալ գործոններից յուրաքանչյուրի քանակական արժեքի հիման վրա իրականացվում է երկրի մրցունակության գնահատումը: Որպես կանոն, երկրի զբաղեցրած դիրքը բազմապատկվում է յուրաքանչյուր գործոնի քանակական

---

[8] https://www.inventech.ru/lib/predpr/predpr0042/
[9] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf
[10] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf

արժեքով, այնուհետև ձեռք բերված մեծությունները գումարվում են, որից հետո երկրները, ընդհանուր գնահատականների հիման վրա, զբաղեցնում են այս կամ այն տեղը գնահատման սանդղակում[11]:

## 1.2. Գործարար միջավայրը և դրա գնահատումը

Գործարար միջավայրը բիզնեսին կամ ձեռնարկությանը շրջապատող արտաքին միջավայրն է, որի մեջ մտնում են այն ամենը, ինչը գտնվում է տվյալ կազմակերպությունից դուրս, սակայն փոխգործակցում է նրա հետ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում է կազմակերպության կամ նրա առանձին մասերի վրա: Գործարար միջավայրը ձևավորվում է կազմակերպության գործունեության հետ մեկտեղ և կարող է փոփոխվել կապված շուկայի, գործունեության ոլորտի, ռազմավարության փոփոխությունների հետ: Տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար գործարար միջավայրը հանդես է գալիս որպես տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ պայմանների ամբողջություն[12]:

Բիզնես միջավայրի սահմանումը ներքին և արտաքին բոլոր գործոնների համախումբ է, ինչպիսիք են աշխատողները, հաճախորդների կարիքներն ու սպասումները, առաջարկը և պահանջարկը, կառավարումը, հաճախորդները, մատակարարումը, սեփականատերերը, կառավարության գործունեությունը, տեխնոլոգիական նորարությունը, սոցիալական միտումները, շուկայի միտումները, տնտեսական փոփոխությունները և այլն: Այս գործոններն ուղղակի և անուղղակի կերպով ազդում են ընկերության գործունեության վրա և այն բանի վրա, թե ինչպես է ընկերությունը գործունեություն ծավալում[13]:

Բիզնես միջավայրը բիզնեսի վրա ազդող բոլոր արտաքին և ներքին գործոնների ընդհանուր գումարն է: Պետք է հիշել, որ արտաքին գործոնները և ներքին գործոնները կարող են ազդել միմյանց վրա և աշխատել միասին ՝ ազդելով բիզնեսի վրա: Օրինակ ՝

---

[11] https://asue.am/upload/files/ner-git_dram_Suvaryan.pdf
[12] http://dspace.paara.am/xmlui/bitstream/handle/123456789/103/%D4%B3%D5%A1%D5%AC%D5%BD%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6%20%D4%B3%D6%87%D5%B8%D6%80%D5%A3.pdf?sequence=1&isAllowed=y
[13] https://www.toppr.com/guides/business-environment/

առողջության և անվտանգության կարգավորումը արտաքին գործոն է, որը ազդում է բիզնեսի գործողության ներքին միջավայրի վրա: Բացի այդ, որոշ արտաքին գործոններ մեր վերահսկողությունից դուրս են: Այս գործոնները հաճախ կոչվում են արտաքին սահմանափակումներ: Եկեք դիտարկենք մի քանի կարևոր գործոններ՝

- Արտաքին գործոններ
- Քաղաքական գործոնները կառավարության գործունեությունն են և քաղաքական պայմանները, որոնք կարող են ազդել բիզնեսի վրա: Օրինակ կարող ենք բերել օրենքները, կանոնակարգերը, սակագները և առևտրի այլ խոչընդոտները, պատերազմներն ու սոցիալական անկարգությունները:
- Մակրոտնտեսական գործոնները այնպիսի գործոններ են, որոնք ազդում են ամբողջ տնտեսության վրա, այլ ոչ միայն բիզնեսի: Օրինակ կարող են ծառայել տոկոսադրույքները, գործազրկության մակարդակը, արտարժույթի փոխարժեքը, սպառողների վստահությունը, սպառողի հայեցողական եկամուտը, սպառողների խնայողությունների տոկոսադրույքները և այլն:
- Միկրոտնտեսական գործոնները գործոններ են, որոնք կարող են ազդել բիզնեսի վրա, ինչպիսիք են շուկայի չափը, պահանջարկը, առաջարկը, մատակարարների և բաշխիչ ցանցի հետ փոխհարաբերությունները, ինչպիսիք են արտադրանքը վաճառող մանրածախ խանութները մրցակցության քանակը և ուժեղությունը[14]:

Բիզնես միջավայրը կարելի է բաժանել ինչպես մակրո, այնպես էլ միկրո միջավայրի՝ ելնելով հեռանկարից: Մակրոմիջավայրը հաճախ կապված է այն տարրերի հետ, որոնք ազդում են բոլոր բիզնեսների վրա ՝ անկախ իրենց արդյունաբերության կամ չափի, ինչպես դա տեղի է ունենում քաղաքական կամ մակրոտնտեսական ազդեցությունների ժամանակ: Մյուս կողմից, միկրո միջավայրը հայտնի է, որպես

[14] https://study.com/academy/lesson/what-is-business-environment-definition-factors-quiz.html

բիզնեսի մրցակցային մթնոլորտ, որն իր մեջ ներառում է մրցակիցներ, հաճախորդներ և մատակարարներ:

Ռազմավարական տեսանկյունից գործարար միջավայրի վերլուծությունը կարևոր նշանակություն ունի արդյունավետ ռազմավարություն մշակելու համար ՝ ընկերության նպատակներին հասնելու համար: Բիզնեսները սովորաբար վարձում են խորհրդատվական ընկերություններ, որոնք մասնագիտացված են ռազմավարական վերլուծության մեջ ՝ ուսումնասիրելու այս միջավայրի ներկա իրավիճակը՝ շրջակա միջավայրի դինամիկան հասկանալու համար: Այս ուսումնասիրությունները, ընդհանուր առմամբ, սահմանում են հնարավոր սպառնալիքներն ու հնարավորությունները, որոնք ընկերությունը պետք է ներառի իր ռազմավարական պլանավորման մեջ ՝նպատակներին հասնելու համար: Ի վերջո, ընկերությունները պետք է բավականաչափ ճկուն մնան ՝ հարմարվելու բիզնես միջավայրի հանկարծակի փոփոխություններին: Հարմարվելու այս հնարավորությունը կապահովի ընկերության գոյատևումը նույնիսկ ամենավատ բիզնեսի սցենարների ժամանակ[15]:

Տնտեսության զարգացման ներկա պայմաններում գործարար միջավայրի վարկանիշի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք հնարավորություն են տալիս կամ բարձրացնել տվյալ երկրի և տեսության մրցունակությունը կամ այն դարձնել ոչ նախընտրելի ներքին և օտարերկրյա ներդրողների համար: Հետևաբար, ցանկացած երկրում անհրաժեշտ է ձևավորել մրցունակ տնտեսություն և ոլորտներ, որտեղ ինստիտուցիոնալ զարգացման հիմքերը կխթանեն ներդրումային ծրագրերի իրագործմանը միևնույն ժամանակ շարունակական բարեփոխումներ իրականացնելով ոչ ֆորմալ հարաբերությունների, կոռուպցիայի կրճատման համար:

Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցում յուրաքանչյուր տարի վերլուծվում և գնահատվում են 189 երկրների գործարար միջավայրի վարկանիշը կամ գործարարությամբ զբաղվելու վարկանիշը: Այն ցույց է տալիս գործարարության ծախքերը կամ վարչարարական բեռը և տարբեր են 189

[15] https://www.myaccountingcourse.com/accounting-dictionary/business-environment

երկրներում ըստ ցուցանիշների: Ուստի, գործարար միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ հիմքերը պայմանավորված են գործարար հատվածի մուտքի և ելքի տարբեր արգելքների վերացմամբ:

Գործարար միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է, որի զարգացումը հնարավորություն է ընձեռում մեղմելու անցումային տնտեսություններին բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ հետագա տնտեսական աճի համար: ՀՀ-ում անկախության տարիներից հետո իրականացվել են բազնաբնույթ բարեփոխումներ, սակայն դեռևս առկա են բազմաթիվ թերություններ և բացթողումներ, ինչը նպաստում է նաև գործարարության ակտիվության նվազեցմանը: Այսպիսով՝ գործարար միջավայրը հանդիսանալով տնտեսական, սոցիալական և քաղաքական բազմաբնույթ և տարատեսակ գործառույթներ իրականացնող ոլորտ, իր վրա կրում է բազմաթիվ գործոնների ազդեցությունը՝ մի կողմից հարմարվելով այդ գործոնների ազդեցությամբ ստեղծված նոր միջավայրին, իսկ մյուս կողմից՝ փորձելով վերափոխել այդ միջավայրը՝ առաջ մղել սեփական շահերը և հասնել առավելագույն արդյունքների, հետևաբար գործարար միջավայրի կառուցվածքի վերլուծությունից կարելի է նշել, որ գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է ապահովել ներքին և արտաքին միջավայրերի և դրանց գործոնների միջև փոխհամաձայնեցվածություն: Որպես գործարար միջավայրի վրա ազդող գործոններ կարելի է դիտարկել «Doing Business»–ի կողմից մշակված գործարարությամբ զբաղվելու հիմնական ցուցանիշները, որոնք սահմանում են որևէ երկրում բիզնես սկսելու և վարելու դյուրինության աստիճանը:

Աշխարհում և ըստ եկամուտների խմբավորված երկրների խմբերի համար գործարար միջավայրին վերաբերող «Doing Business>>-ի ցուցանիշների ուսումնասիրությունը բացահայտում է մի շարք օրինաչափություններ որոնցից հիմնականներն են.

- Ցածր եկամուտներով երկրները բոլոր ցուցանիշներով հետ են մնում աշխարհի (միջին) ցուցանիշից,

- Միջին եկամուտներով երկրներում նկատվում է աշխարհի (միջին) ցուցանիշների մոտարկում
- Ցածր և միջին եկամուտներով երկրների բոլոր ցուցանիշները, որպես կանոն, զիջում են աշխարհի բոլոր երկրների համար միջինացված ցուցանիշներին
- Ակնհայտ է բարձր եկամուտներով երկրների ցուցանիշների գերազանցումն աշխարհի (միջին) ցուցանիշներից[16]:

Ըստ Doing Business 2020 թվականի զեկույցի ամբողջ աշխարհում 115 տնտեսություններ հեշտացրել են բիզնես վարելու գործընթացը: Առավել ուշագրավ զարգացում են ապրել Սաուդիան Արաբիան, Հորդանանը, Տոգոն, Բահրեյնը, Տաջիկստանը, Պակիստանը, Քուվեյթը, Չինաստանը, Հնդկաստանը և Նիգերիան:

[16] https://cyberleninka.ru/article/n/indicators-characterizing-the-business-environment-in-the-different-groups-of-countries/viewer

Աղյուսակ 2.

Բիզնես վարելու համար աշխարհի թոփ 10 լավագույն երկրները[17].

| Տեղը | Տնտեսությունը | DB ցուցանիշը |
|---|---|---|
| 1 | Նոր Զելանդիա | 86.8 |
| 2 | Սինգապուր | 86.2 |
| 3 | Հոնգ Կոնգ | 85.3 |
| 4 | Դանիա | 85.3 |
| 5 | Հվ. Կորեա | 84.0 |
| 6 | ԱՄՆ | 84.0 |
| 7 | Վրաստան | 83.7 |
| 8 | Միացյալ թագավորություն | 83.5 |
| 9 | Նորվեգիա | 82.6 |
| 10 | Շվեդիա | 82.0 |

Որպեսզի պատասխանենք այն հարցին, թե որ բիզնես միջավայրում է գործում կազմակերպությունը, այն կարող ենք գնահատել այնպիսի պարամետրերով, ինչպիսիք են բարդությունը, կայունությունը և անորոշությունը: Բիզնես միջավայրի բարդությունը պայմանավորված է նրանով, որ կան բազմաթիվ տարասեռ տարրեր, որոնք փոխազդում են միմյանց հետ՝ ազդելով կազմակերպության վրա: Պարզ բիզնես միջավայրը բաղկացած է համասեռ տարրերի երեքից չորս խմբերից:

Բիզնես միջավայրի կայունությունն ու անկայունությունը կապված են տարրերի դինամիզմի հետ: Անկայուն միջավայրը բնութագրվում է հաճախակի փոփոխություններով, որոնք կարող են առաջանալ մրցակիցների գործողությունների, պահանջարկի տատանումների, նոր ապրանքների և տեխնոլոգիաների առաջացման հետևանքով: Որպես կանոն, դրանք անկանխատեսելի են: Բիզնես միջավայրը կայուն է, եթե դրա տարրերը երկար ժամանակ չեն փոխվում: Կայուն միջավայրի գործոններ են ապրանքների (ապրանքների և ծառայությունների) կայուն պահանջարկը և

[17] https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32436/9781464814402.pdf

առաջարկը: Կարող է առաջանալ պահանջարկի աստիճանական փոփոխություն, որը դժվար չէ կանխատեսել[18]:

Աղյուսակ 3

«Doing Business»- կողմից գործարար միջավայրի գնահատման մեթոդաբանությունը[19].

| Մեթոդաբանություն | Հարցաթերթիկներ |
|---|---|
| Ձեռնարկությունների ստեղծում | • Բիզնեսի ուսումնասիրությանը վերաբերող հարցեր<br>• Բարեփոխումների թարմացմանը վերաբերող հարցեր<br>• Բիզնեսի մեկնարկի գործընթացին վերաբերող հարցեր<br>• Հետազոտական հարցադրումներին վերաբերող հարցեր<br>• Լրացուցիչ հարցեր հանրային հատվածի պատասխանողների համար[20] |
| Շինարարության թույլտվությունների ստացում | |
| Սեփականության գրանցում | |
| Վարկերի ստացում | |
| Ներդրողների պաշտպանություն | |
| Հարկային քաղաքականություն | |
| Միջազգային առևտուր | |
| Պայմանագրերի կիրառում | |
| Անվճարունակության դեպքերի լուծում | |

Տարբեր երկրներում լայն տարածում է ստացել BERI (բիզնես միջավայրի ռիսկերի հետազոտում) միջազգային հետազոտական կազմակերպության կողմից կատարված ներդրումային և գործարար միջավայրի հետազոտությունը: Այսպես, համաձայն

[18] https://studref.com/516018/ekonomika/analiz_otsenka_delovoy_sredy
[19] https://www.doingbusiness.org/ru/methodology
[20] https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/pdf/db2020/DB20-Starting-a-Business-Questionnaire.pdf

վերջինիս յուրաքանչյուր տարի առանձնացվում են լավագույն երկրները, որոնց վերաբերյալ տրվում են վարկանիշներ[21]:

Ուսումնասիրվող հիսուն երկրներից յուրաքանչյուրի համար կազմվում են երկու էջից բաղկացած ճեպազրույցներ, որոնց յուրաքանչյուր էջում ներառված են չորս բաժիններ ( Փոխատուի ռիսկերի քանակական (LRquant), փոխատուի ռիսկերի Որակական (LRqual), փոխատուի ռիսկերի Բնապահպանություն (LRenvir) եւ Composite Score) : Կազմվում է տնտեսական և ֆինանսական տեղեկատվության աղյուսակ, որում ներկայացված են կարևոր ցուցանիշների վիճակագրությունը, քաղաքական տեղեկատվությունը, ներառյալ կառավարման համակարգը, կառավարման փոփոխությունները և քաղաքական ամենահավանական սցենարը[22]:

## 1.3. Ներդրումային միջավայրի բարելավման և տնտեսության մրցունակության բարձրացման զարգացող երկրների փորձը

Արդյունաբերության ոլորտում զարգացած երկրները համարվում են օտարերկյա ուղղակի ներդրումների հիմնական արտահանող ու ներմուծող երկրները: Օտարերկյա ուղղակի ներդրումների նշանակությունը չափազանց մեծ է թույլ զարգացած տնտեսությամբ և զարգացող երկրների համար: [23] Աշխարհաքաղաքական ոչ կայուն իրավիճակը նկատելի դարձավ 21-րդ դարի սկզբում, ինչը հանգեցրեց ներդրումային ակտիվության նվազման: Զարգացած երկրների գործարար վստահության անկում տեղի ունեցավ, առաջին հերթին ԱՄՆ-ում, Կանադայում և <<հին>> Եվրոպայի երկրներում: Սրա հետ մեկտեղ դինամիկ կերպով զարգանում էին Հնդկաստանը, Ճապոնիան, Չինաստանը, և այլ ասիական երկրներ: Առաջ անցնելով ԱՄՆ-ին՝ առաջին անգամ ամենամեծ ռեցիպիենտ երկիր դարձավ Չինաստանը: Բազմաթիվ երկրներ կարողացան ներգրավել ավելի շատ ՕՈՒՆ, քան նախորդ տարիներին: ՕՈՒՆ միջազգային շարժի վրա բացասական ազդեցություն թողեց 2008 թ. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, բայց ընդհանուր առմամբ

[21] http://etd.asj-oa.am/5850/1/015-Anahit_Drambyan.pdf
[22] http://www.beri.com/Publications/FORELEND.aspx
[23] БалацкийЕ., Павличенко «Иностранные инвестиции и экономический рост» #1, Москва 2002г.

զգալիորեն աճեցին 2000-2011 թթ. ՕՈՒՆ-ի ներգրավման և կուտակման ծավալները: Զարգացած երկրների ցուցանիշներին զգալիորեն սկսեցին մոտենալ զարգացող երկրները ՕՈՒՆ-ի ներգրավման ցուցանիշները, իսկ անցումային տնտեսությամբ երկրները մեծացրեցին իրենց ազգային տնտեսություններում ՕՈՒՆ-ի բաժինը:

**Աղյուսակ 2**

**2018թ ՕՈՒՆ-ի համաշխարհային ներհոսքի թոփ տաս հյուրընկալ տնտեսությունները/մլրդ դոլար/**[24]

| *Պետության անվանում* | *ՕՈՒՆ հոսք/մլրդ դոլար* |
|---|---|
| *ԱՄՆ* | *226* |
| *Մեծ Բրիտանիա* | *122* |
| *Չինաստան* | *142* |
| *Հոնգ Կոնգ* | *112* |
| *Սինգապուր* | *77* |
| *Բրազիլիա* | *59* |
| *Նիդերլանդներ* | *64* |
| *Ավստրալիա* | *62* |
| *Հնդկաստան* | *43* |

[24]https://unctad.org/en/PublicationsLibrary/diaeiainf2019d1_en.pdf

*Աղյուսակ 2*

***ՕՈՒՆ-ի համաշխարհային հոսքը***[25]

| | **2017** | **2018** | **Աճի տեմպ** |
|---|---|---|---|
| **Աշխարհ** | **1470** | **1188** | **-19** |
| **Զարգացած երկրներ** | **749** | **451** | **-40** |
| *ԵՄ* | *372* | *100* | *-73* |
| *Հյուսիսային Ամերիկա* | *302* | *263* | *-13* |
| **Զարգացող երկրներ** | **673** | **694** | **3** |
| *Աֆրիկա* | *38* | *40* | *6* |
| *Լատինական Ամերիկա* | *155* | *149* | *-4* |
| *Զարգացող Ասիա* | *478* | *502* | *5* |
| **Անցումային տնտեսությամբ երկրներ** | **48** | **44** | **-8** |

Ներկայացնենք մի քանի երկրներ՝ ՕՈւՆ ներգրավման գործում արձանագրած հաջողությունները, իրենց ցուցանիշները, ինչից հետո կարելի է եզրահանգումներ կատարել, և ՀՀ նույն ոլորտի զարգացման տարբերակներ առաջարկել: Ներկայացված աղյուսակային ցուցանիշների աղբյուր է հանդիսանում Doing Business 2019 թ. զեկույցը[26]:

Չեխիայում բիզնեսի հիմնադրումը միջինում տևում է 24 օր և կազմում մոտ 960 ԱՄՆ դոլար, իսկ Իռլանդիան գրեթե բոլոր ցուցանիշներով լավագույն տասնյակում է Համաշխարհային Բանկի տվյալներով: Չեխիան ունի շատ բարենպաստ

25 https://unctad.org/en/PublicationsLibrary/diaeiainf2019d1_en.pdf
26 https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB2019-report_web-version.pdf

աշխարհագրական դիրք, որակյալ աշխատուժ, իսկ աշխատավարձի մակարդակը բավականին ցածր է[27]:

Չեխիայի կառավարությունը 1993 թ-ից որդեգրեց տնտեսության զարգացման գիտելիքահեն-գիտատար ճյուղերի վրա հիմնված քաղաքականությունը և սկսեց ակտիվորեն առաջարկել ՕՈւՆ ներգրավման խթաններ ֆինանսական միջոցների բացակայությունից ելնելով: Խթաններից կարելի է առանձնացնել հետևյալը՝ ներդրողները կարող են ստանալ մինչև տասը տարի ժամկետով եկամտահարկի մասնակի կամ լրիվ արտոնություն, ինչն էլ հանգեցրեց նոր աշխատատեղերի ստեղծմանը: Չեխիայի կառավարությունը ևս մեկ կարևոր քայլ կատարեց. ֆինանսավորեց աշխատողների վերապատրաստման ծախսերի մոտ 35%-ը: Պետությունը ներդրողներին տրամադրում էր շուկայականից ցածր գներով տեխնիկապես հագեցած տարածքներ: Ստեղծվեց ներդրումների ներգրավման գործակալություն: Այն գործում էր այլ պետական մարմիններից անկախ, արտադրական ենթակառուցվածքների զարգացում, օտարերկրյա ներդրումների գրանցում էր կատարում և այլ ֆունկցիաներ: Բարեփոխումների արդյունքը եղավ ՕՈւՆ տպավորիչ աճը՝. եթե 1993-ին կազմում էին 654 մլն. ԱՄՆ դոլար, ապա 2019-ին՝ 9 մլրդ ԱՄՆ դոլար, այսինքն աճել է ավելի քան 14 անգամ[28]:

ՀՀ և Իռլանդիան բավականաչափ նման են իրար տնտեսական բնութագրերով, Իռլանդիան 1970 թթ. դեռևս ագրարային թույլ զարգացած երկիր էր, իսկ արդեն 2005-ին արդյունքներով այն աշխարհում հայտարարվեց ապրելու լավագույն երկիրը կյանքի որակի հետազոտության արդյունքներով: Մեծ Բրիտանիայի հետ Իռլանդիան ուներ չլուծված տարածքային խնդիրներ:

Իռլանդիայի կառավարությունը փորձեց կիրառել հովանավորչական քաղաքականության առավելությունները 1970 թ. սակայն այն հաջողության չհասավ, քանի որ Իռլանդիան չուներ արտադրությունը խթանող պայմաններ: Խնդիր էր նաև աշխարհագրական դիրքը և տեխնիկական զինվածությունը, ինչը հնարավորություն

[27] https://www.worldbank.org/
[28] https://www.doingbusiness.org/en/reports/global-reports/doing-business-2019

չէր տալիս օգտվել Ատլանտյան օվկիանոսի բարիքներից: Իռլանդիան ուներ քիչ մարդկային ռեսուրսներ, իսկ որակյալ աշխատուժը աստիճանաբար լքում էր երկիրը:

Իռլանդիայի կառավարությունը իր որդեգրած պետական քաղաքականությամբ՝ ուղղակի ազդեցությամբ բարձրարեց աշխատուժի որակական հատկանիշները, ետին պլան մղվեց երկրի ունեցած բնական պաշարները, տնտեսությունը զարգացնելու համար նրանք առաջնորդում էին քիչ ծախսեր-մեծ հավելյալ արժեքով ունեցող արտադրությամբ,ինչպես նաև բացառիկ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ռեսուրսների ներմուծման և ներգրավման համար, կրթությունը դարձավ պարտադիր: Չկար մեծ սպառողական շուկա, և խնդրի լուծումը տրվեց անդամակցելով ԵՄ-ին, որի հետ միաժամանակ նաև տարածքային խնդիրը լուծվեց: Այս բոլոր գոր՛ողությունները բերեց ֆինանսական միջոցների ներհոսքին: ԵՄ-ից ստացված վարկերն ու դրամաշնորհներն ներդրվեց երկրի ենթակառուցվածքների զարգացման գործում: Իռլանդիայի կառավարությունը տրամադրում էր մաքսային և հարկային արտոնություններ: Իռլանդիան աստիճանաբար բարձրացրեց իր վարկանիշը միջազգային ասպարեզում: Իռլանդիայի կառավարությունը նաև ստեղծեց Իռլանդիայի զարգացման գործակալություն ՕՈւՆ ներգրավումն արդյունավետ կազմակերպելու նպատակով (1975): Կատարված բոլոր բարեփոխումների շնորհիվ զարգացան արտահանման ուղղվածության ճյուղերը, աստիճանաբար մեծացան ներդրումների հոսքը դեպի երկիր, զարգացան արտահանման ուղղվածության ճյուղերը, և ստեղծվեցին նոր աշխատատեղեր, ինչն էլ հանգեցրեց տնտեսական աճի: Իռլանդիան հարկային արտոնություններ է տրամադրում գիտահետազոտական ոլորտում ներդրումների և ծախսերի իրականացման համար (օրինակ՝ յուրաքանչյուր նոր աշխատատեղի համար մոտ 20000 եվրոյի աջակցություն), կապիտալ-ներդրումների սուբսիդավորում, ազատ տնտեսական գոտիների ստեղծում, ներդրումների ներգրավման գործակալության ստեղծում, ինչն էլ կհեշտացնի ՕՈւՆ ներգրավման և գրանցման գործընթացը[29]: Ըստ Համաշխարհային մրցունակության

[29] https://www.doingbusiness.org/en/reports/global-reports/doing-business-2019

զեկույցի Իռլանդիան ներկայումս իր մրցունակությամբ զբաղեցնում է քսանչորսերորդ հորզոնականը[30]:

Սովորաբար Թայվանի ետպատերազմյա ինդուստրացումը մեկ շնչին բաժին ընկնող կապիտալին է վերագրվում և արտահանման շուկաներում փոփոխություններին ու կառավարության քաղաքականությանը: Թայվանի բնակչությունը 1940-ից 1962 թթ. աճել է ավելի քան 3 %-ով, ինչն էլ կրճատել է մեկ շնչին բաժին ընկնող հողի ծավալը: Ընդհանուր առմամբ պատերազմից հետո Թայվանի գյուղատնտեսական արտադրանքը հանդիպեց բավականին մեծ առևտրային արգելքների: Թայվանն ընտրեց ներկրմանը փոխարինող քաղաքականություն 1950-ական թթ., որին էլ հաջորդեց արտահանման խթանման քաղաքականությունը 1960-1970 թթ.: Արտահանման խթանման ռեժիմի համաձայն, ստեղծվել են բիզնեսին արտոնություններ տրամադրող արտահանման արտոնյալ գոտիներ, որոնց արտադրված արտադրանքը երկրի ներսում վաճառքի համար նախատեսված չէ: «Թայվանական հրաշքը» կառավարության իրականություն դարձավ քաղաքականության շնորհիվ: Իրական ՀՆԱ-ն աճել է 10% ամեն տարի 1960-1970 թթ. ( մեկ շնչի հաշվով 7%)[31] : Ներկայումս Թայվանը իր մրցունակության ցուցանիշով զբաղեցնում է տասնիինգերորդ հորիզոնականն[32]:

Էստոնիան Հյուսիսային Եվրոպայում, Բալթիկ ծովի ափին, արևմուտքի և արևելքի, հյուսիսի և հարավի խաչմերուկում գտնվող փոքր երկիր է: 1918թ. Էստոնիան հռչակեց իր անկախությունը, սակայն տարիներին օկուպացվեց Խորհրդային Միության կողմից Երկրորդ Համաշխարհային պատերազմի, ինչի արդյունքում կորցրեց իր բնակչության 20 %-ը: Էստոնիան նորից անկախացավ 1991թ.: Երկրում իսկական քաոս ստեղծվեց անկախացումից հետո ՝ ռուսական ռուբլին չուներ որևէ արժեք, դատարկվել էին խանութները, հերթ էին կանգնում մթերք գնելու համար և այլն: Էստոնիայի արտաքին առևտրի 92 %-ը բաժին էր ընկնում Ռուսաստանին՝

[30] https://www.weforum.org/reports/how-to-end-a-decade-of-lost-productivity-growth
[31] https://web.archive.org/web/20131030190252/http://eh.net/encyclopedia/article/olds.taiwan.economic.history
[32] https://www.weforum.org/reports/how-to-end-a-decade-of-lost-productivity-growth

երկիրը գտնվում էր կախման մեջ: Շատերի կարծիքով Էստոնիան ոչ մի հույս չունեցող հերթական հետխորհրդային երկիրն էր[33]:

1992 թ. իրականացված դրամական բարեփոխումը Էստոնիայում իրականացված առաջին իրական բարեփոխումն էր: Էստոնիայի համար կարևոր մարտահրավեր էր սեփական արժույթի ներդրումը: Էստոնական կրոնը կցեցին գերմանական մարկին, հետո եվրոյին: Տաղանդավոր երիտասարդ գիտնականներից բաղկացած Էստոնիայի կառավարությունը, իրականացրել է գների, ներքին և արտաքին առևտրի ազատականացում 1992 թ.: 1994 թ. Էստոնիան ԵՄ հետ ազատ առևտրի մի շարք համաձայնագրեր է կնքել: Պետական գույքի մասնավորեցումը արագ տեմպով էր ընթանում: Շուկայական բարեփոխումները հիմք ստեղծեցին կայուն տնտեսական աճի համար: Էստոնիան անդամակցեց ՆԱՏՕ-ին 2004 թ., իսկ նույն տարվա մայիսի մեկին ԵՄ-ին: 2011 թ. հունվարի մեկին Էստոնիան անցավ եվրոյի՝ հրաժարվելով իր ազգային արժույթից: Էստոնիայի բնակչության 84% ունի ID քարտ, ինչը թույլ է տալիս տասնութ րոպեում ընկերությունը համացանցի միջոցով գրանցել, իսկ հարկային հայտարարագիրը տրվում է երեք րոպեի ընթացքում: Ամբողջապես համակարգչայնացված են տրանսպորտը, կրթությունը և առողջապահությունը: ՏՏ ոլորտում ներդրումների համար հիմք հանդիսացան թափանցիկ պետական քաղաքականությունը, ցածր հարկերը, ազատականացված տնտեսությունը և էլեկտրոնային պետության կոնցեպցիան: Կառավարությունը խրախուսում է գիտելիքահեն տնտեսության կառուցումը կողմնորոշված նորարության վրա: Երկրում գործում են նոր և գործող ստարտափների զարգացմանը աջակցող բազմաթիվ կառավարական ծրագրեր, կառավարական վենչուրային հիմնադրամներ և բիզնես-ինկուբատորներ: Արդյունքում մեկ շնչին բաժին ընկնող ստարտափերի քանակով այս փոքր պետությունը զբաղեցնում է աշխարհում առաջին տեղը: Ստարտափների կողմից ներգրավված ներդրումները 2006 թվականից ի վեր կազմում են 267 մլն եվրո, որից 100 մլն եվրոն 2015 թ.[34]:

---

[33]https://www.heritage.org/report/the-estonian-economic-miracle
[34]https://www.ehorussia.com/new/node/13885

Էստոնիայի կառավարությունը որդեգրած քաղաքականությունը ՕՈՒՆ-ի ներգրավմումն ու մրցունակության բարձրացմումն էր: Էստոնիան միշտ հինվում էր առևտրի վրա, որպես փոքր, բաց պետություն: առավելություններ Շուկայական տնտեսությանը հարթ և արագ անցնելու հարցում հրապարակայնությունը ապահովում է մի շարք առավելություններ: Այսն քաղաքականությունը թույլ է տալիս ունենալ թափանցիկ տնտեսական միջավայր: Էստոնիան երկիրը դարձրել է ազատ առևտրի գոտի կրճատելով առևտրային սակագները և ոչ սակագնային խոչընդոտները և չեղյալ հայտարարելով արտահանման հետ կապված բոլոր սահմանափակումները: Միջազգային կառույցներից պարտք վերցնելուն հիանալի այլընտրանք էր օտարերկյա ներդրումների ներգրավումը Էստոնիայի նման անցումային տնտեսությամբ երկրի համար:Բազմաթիվ երկրներ փորձում են խթանել օտարերկրյա ներդրողներին՝ առաջարկելով հարկային և այլ տեսակի արտոնություններ և հատուկ իրավունքներ: Մեկ ուրիշ տարբերակ է կառուցել բիզնես միջավայր, որը խրախուսում է առանց որևէ տարբերության ներքին ներդրումները և օտարերկյա ներդրումները: Էստոնիան ընտրեց երկրորդ տարբերակը: Այս բոլոր բարեփոխումների արդյունքում Էստոնիան ներդրողների համար դարձավ ամենագայթակղիչ երկրներից մեկը, նախկինում լինելով գրեթե անհայտ վայր: Երկիրը վայելում էր լավ համբավ կառավարաության ջանքերով ինչն էլ օգնեց ՕՈՒՆ ներգրավմանը: Էստոնիան ավելի ժամանակակից և մրցունակ պետություն դարձավ ՕՈՒՆ ներգրավման շնորհիվ (երկիր բերեցին նոր տեխնոլոգիաներ, ստեղծվեցին նոր աշխատատեղեր, վերակառուցվեցին հին գործարանները, երկիր բերեցին նոր տեխնոլոգիաներ): Խրախուսվում էր սոցիալական հասարակության ստեղծումը և ժողովրդավարությունը: Պետության, գործատուների և աշխատողների միջև եռակողմ բանակցությունների վարումը ուներ իր առանցաքային դերը տնտեսության զարգացման գործում:

Էստոնիայի փորձի վրա հիմնվելով կարելի է եզրակացնել, որ կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարելու համար ամենաարդյունավետ մեթոդը ՝օրենքի գերակայությունը, շուկայական տնտեսության բարեփոխումների և քաղաքացիական հասարակության զարգացումն է : Կոռուպցիան կնվազի ցանկացած

բարեփոխումից, որը մեծացնում է երկրի տնտեսության մրցունակությունը: Երկրի մրցունակությունն ապահովում է արտաքին մասնավոր սեկտորի մուտքի խոչընդոտների վերացումը, առևտրի վերահսկման նվազեցումը և պետական ընկերությունների սեփականաշնորհումը: Էստոնիայի կառավարությունը փակեց բոլոր պետական բանկերը և շատ պարզ մրցակցային պահանջներ դրեց բոլոր մասնավոր բանկերի համար: Բալթյան երկրներից Էստոնիան ունի ամենաարդյունավետ բանկերը և ամենաքիչ կոռումպացված պետությունն է ԵՄ-ին նոր անդամակցած երկրների շարքում: Ներկայումս Էստոնիան զբաղեցնում է տասնիինգերորդ հորիզոնականն իր մրցունակության ցուցանիշով[35] : Էստոնիան անվանում են Բալթյան վագր իր տնտեսական արագ աճի համար[36] :

Իսրայելը հասել է անկախության և գրանցել զարմանալի տնտեսական աճ չնայած երկրի բարդ տնտեսական իրավիճակին և աղքատությանը:. Իսրայելը սնանկացավ 1948 թ: Համեմատության համար կարելի է դիտարկել օրինակ Հնդկաստանը, որը անկախացել է միևնույն ժամանակաշրջանում: Իսրայելը անկախացման վաթսունինը տարիների ընթացքում իր զարգացման մակարդակով հասել է արևմուտքի երկրներին՝ վերածվելով զարգացած արդյունաբերական-գյուղատնտեսական երկրի: Միևնույն ժամանակ Հնդկաստանը դասվում է <<երրորդ երկրների>> շարքին, չնայած վերջին տարիներին գրանցած բարձր տնտեսական աճին, հետ մնալով Իսրայելից գրեթե բոլոր ցուցանիշներով: Իսրայելի ՀՆԱ 1949 թ. 2 մլրդ դոլլարից 2015 թ. աճել է 305 մլրդ դոլլար: [37]Ներկայումս Իսրայելն ունի ավելի քան երբևէ զարգացած տնտեսություն: Իսրայելի տնտեսական կայունությունն ապահովում են բյուջեի ցածր դիֆիցիտը, ցածր բանկային տոկոսադրույքները, պետական պարտքի և պետական ծախսերի կրճատումը, բանկերի վերահսկողությունը, անշարժ գույքի և ֆինանսական ոլորտներում փուչիկի բացակայությունը, նվազեցնել անձնական պարտքերը, հարկերի կրճատումը, ազգային արժույթի կայունությունը:

---

[35]https://www.weforum.org/reports/how-to-end-a-decade-of-lost-productivity-growth
[36]https://www.heritage.org/report/the-estonian-economic-miracle
[37] http://www.focus-economics.com/countries/israel

Իսրայելում ստարտափները մեծ քանակության են հասնում: Սա հիանալի օրենսդրական դաշտի շնորհիվ է: Իրենց հետազոտական կենտրոնները բացել և առեկի ներդրումներ սկսեցին անել Իսրայելում IBM, Motorola, Microsoft, Intel, Google, Samsung, Yahoo և այլ հսկաներ: Միայն Intel-ի ներդրումները կազմում են տարեկան մոտ հինգ միլիարդ դոլար: Իսրայելը հետազոտությունների ոլորտում աշխարհի առաջատար երկիրն է և ԱՄՆ-ից հետո երկրորդ նորարարական կենտրոնը:

Իսրայելի բանակում ծառայելը զարգացնում է ձեռներեցության համար անհրաժեշտ ունակություններ ըստ ամերիկացի հեղինակներ Դան Սենորի և Սաուլի: Իսրայելական բանակում բարձր է գնահատվում ստեղծագործ և մտավոր աշխատանքը: Զորացրված զինվորների կողմից ստեղծվում են սթարթափերի մեծ մասը: Բանակը զինվորներին նաև հնարավորություն է տալիս կապեր ստեղծել, որոնք հետեգայում բիզնեսով զբաղվելիս օգնում են նրանց: Բանակում զիվորները հնարավորություն ունեն ստեղծել սոցիալական կապիտալ և հետագայում այն օգտագործել բիզնես սկսելու կամ հաջողակ կազմակերպությունում աշխատանքի ընդունվելու համար: Այն Հարվարդի նման մի տեղ է: Այսօր Իսրայելի ՀՆԱ-ի ավելի քիչ, քան 5 տոկոսն են կազում պաշտպանության, հակաահաբեկչական և երկրի անվտանգության կազմակերպությունները:

Իսրայելը՝ չունենալով բնական ռեսուրսներ ,ունենալով ավելի քիչ բերքատու հողեր ու քաղցրահամ ջուր, կարողացել է գյուղատնտեսության ոլորտում առաջատար դիրքեր գրավել: Պետության խիստ միջամտության շնորհիվ՝ պետությունը կարողանում է նոր աշխատատեղեր բացել, ձեռնարկատերերին արտոնություններ տրամադրել շենքեր կառուցել ունենալ մեծ ռազմական բյուջե, հայրենադարձներին տեղավորել, կադրերի պատրաստման, ուսուցման, վերապատրաստման ծրագրեր ֆինանսավորել և այլն: Իսրայելը նախկինում մեծ շահույթ էր ստանում զենքի վաճառքից և ԽՍՀՄ փլուզումից հետո խնդիրների առաջ կանգնեց, քանի որ այլևս դա չէր կարող անել: Իսրայելը գտավ ելք. ոչ թե անխնա շահագործելով իր առանց այն էլ աղքատ ռեսուրսները կամ կապիտալն արտահանել այլ երկրներ, պետությունը զարգացման ուղղությունը փոխեց դեպի նորագույն տեխնոլոգիաներ: Ֆինանսավորման առյուծի բաժինը ներդրվեց

նորագույն տեխնոլոգիաների և այնպիսի ենթակառուցվածքների ստեղծման համար, որոնք օտարերկրացիներին կգրավեին, անգամ անընդհատ պատերազմի մեջ գտնվող Իսրայելի պարագայում: Իսրայելը այս ամենին հասել է նաև Գերմանիայի և հրեական սփյուռքի ֆինանսական աջակցության շնորհիվ : Ներկայումս Իսրայելը զբաղեցնում է քսանյոթերորդ հորիզոնականն իր մրցունակության ցուցանիշով[38]:

[38] http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

# Գլուխ 2. ՀՀ տնտեսության մրցունակության և գործարար միջավայրի արդի վիճակը և առկա հիմնախնդիրները

## 2.1. ՀՀ տնտեսության մրցունակության ցուցանիշները:

Հայաստանը՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած Գլոբալ մրցունակության զեկույցի 2018 թվականի համարում հրապարակված 140 երկրների շարքում, աշխարհի 69-րդ մրցակցային երկիրն է: Մրցունակության աստիճանը Հայաստանում 2007 թվականից մինչև 2019 թվականը միջինում հասել է 84,31-ի, 2011-ին հասնելով բոլոր ժամանակի լավագույն ցուցանիշին՝ 98-ի, իսկ 2019-ին ՝ ռեկորդային ցածր մակարդակի՝ 69[39]:

Հայաստանում արագ տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է զբաղվածության ընդլայնում, ինչպես նաև մրցունակության բարելավում: Վերջին տասնամյակում Հայաստանում տնտեսապես ակտիվ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսները նվազել են: Սա բացասաբար է ազել զբաղվածության մակարդակի վրա: Բացի վատթարացող ժողովրդագրական միտումները, տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության շուրջ կեսը չունի մասնագիտական կրթություն: Թեև ՀՀ-ն միջինից ցածր եկամտով երկրների խմբից անցել է միջինից բարձր եկամտով երկրների խումբ, տնտեսական զարգացման տեմպը բավարար չի եղել լուծելու գործազրկության, միգրացիայի, տնտեսական ներառականության և արդարության առանցքային մարտահրավերները: Երկրի տնտեսական զարգացումը կախված կլինի կայուն, դիվերսիֆիկացված տնտեսական աճից, ինչպես նաև արժեքի ստեղծման գործընթացին մասնակցող, բարձր հմտություններով օժտված աշխատուժից:

ՀՀ ՀՆԱ-ի աճի տեմպը բավարար չի եղել կանխելու աշխատատեղերի կրճատումը երկրում՝ աշխատուժի արտադրողականության ավելի արագ աճի պատճառով: Դիտարկվող ժամանակաշրջանում ( 2011-2019 թթ. ) զբաղվածների թիվը ՀՀ-ում կրճատվել է 163 հազարով: Երկրում արտադրողականության ցանկալի

[39] https://www.doingbusiness.org/en/doingbusiness

մակարդակին հասնելու, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծման առանցքային մարտահիրավերը հասցեագրելու համար անհրաժեշտ է թիրախավորել ՀՆԱ-ի աճի ավելի բարձր տեմպ[40]:

Աշխատուժի առաջարկը կախված կլինի աճի սցենարներից: 2030 թ. դրությամբ ըստ իներցիոն աճի սցենարի՝ աշխատուժի առաջարկի 20 % (ենթադրելով զուտ միգրացիայի զրոյական մակարդակ)[41]:

Տնտեսական կառուցվածքի համաշխարհային վերափոխումների և տեխնոլոգիական զարգացումների արդյունքում աշխատանքների պահանջները շատ արագ փոխվում են, և մեծանում է ապագայում աշխատուժի կարիքի հետ կապված անորոշությունը: Մարդկային կապիտալն այն առանձնահատուկ արժեքային առաջարկն է, որը կօգնի Հայաստանին համաշխարհային մակարդակով առանձնանալ տաղանդի և ներդրումների մրցակցության մեջ: Անընդհատ և արագ փոփոխություններին շարունակաբար հարմարվելու ունակությունը մեծապես կախված կլինի նոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ արագ ձեռք բերելու ներուժից: Հայաստանը պիտի ձգտի դառնալ արագ սովորողների երկիր և այս տեսլականով առաջնորդվի ծավալվող համաշխարհային անորոշությունների պայմաններում:

Շատ երկրների զարգացման ռազմավարություններում այսօր գերիշխում է ներառական աճի գաղափարը: Հայաստանի կառավարության վերջին ծրագրով ևս այն հայտարարված է տնտեսական քաղաքականության ընդհանուր նպատակ:

Ներառական աճի համար անհրաժեշտ է զբաղվածության ընդլայնում, որը պահանջում է բարելավված մրցունակություն՝ տնտեսության ավելի արագ աճ ապահովելու համար:

[40] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf
[41] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf

Աղյուսակ 4.

Հայաստանի դիրքը միջազգային վարկանիշային աղյուսակներում[42]

| Ցուցանիշը | Դիրքը | Փոփոխությունը | Երկրների թիվը |
|---|---|---|---|
| Գործարարությամբ զբաղվելը 2019 թ. | 41 | 6 | 190 |
| Տնտեսական ազատության ինդեքս 2019 թ. | 47 | -3 | 180 |
| Գլոբալ մրցունակության ինդեքս 2018 | 70 | 2 | 140 |
| Գլոբալ ինովացիոն ինդեքս 2018 | 68 | -9 | 126 |
| Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2018 | 105 | 2 | 180 |
| Մարդկային զարգացման ինդեքս 2017 | 83 | 1 | 189 |
| Մարդկային կապիտալի ինդեքս 2018 | 78 | - | 157 |
| Առևրի ինդեքս 2016 | 68 | -15 | 136 |
| Լոգիստիկ ինդեքս 2018 | 92 | 49 | 160 |
| Զբոսաշրջության մրցունակության ինդեքս 2017 | 84 | 5 | 136 |

[42] https://mineconomy.am/page/288




Գծապատկեր 1. Մրցունակություն-աճ-զբաղվածություն-ներառականություն փոխազդող կապի մեխանիզմ[43].

Ներառական զարգացման ցուցիչով Հայաստանը 45-րդն է արագ զարգացող 74 տնտեսությունների շարքում:

[43] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf

Աղյուսակ 5.

Հայաստանի վարկանիշն ըստ ներառական զարգացման ցուցչի, 2018 թ. [44]

| Ցուցանիշ | Մակարդակ | Ցուցանիշ | Աճ |
|---|---|---|---|
| Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար | 3,925 | Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճ,% | 3.1 |
| Աշխատուժի արտադրողականություն, ԱՄՆ դոլար | 18,87 | Աշխատանքի արտադրողականության աճ,% | 2.1 |
| Զբաղվածություն,% | 52.9 | Զբաղվածության միտում,% | 1.0 |
| Ջինիի զուտ եկամտի գործակից | 36,0 | Ջինիի զուտ եկամտի գործակցի միտում | 0.5 |
| Ջինիի հարստության գործակից | 58,3 | Ջինիի հարստության գործակցի միտում | -5.6 |
| Միջին եկամուտ, ԱՄՆ դոլար | 5.7 | Միջին եկամտի միտում, ԱՄՆ դոլար | 1.0 |
| Ճշգրտված զուտ խնայողություններ, | 3,7 | Զուտ խնայողությունների միտում, % | -3.5 |
| Պետական պարտք, % | 51.8 | Պետական պարտքի միտում% | 15 |

2018 թ. Համաշխարհային մրցունակության համաթվում ունենալով իր ամենաբարձր վարկանիշը՝ Հայաստանն առայժմ ետ է մնում տարածաշրջանի համադրելի երկրներից:

Համաշխարհային աշխատաշուկան շարունակ ենթարկվում է կառուցվածքային վերափոխումների: Տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, տեխնոլոգիական և

[44] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf

բնապահպանական գործոնները փոխում են աշխատաշուկայի պահանջարկն ու կարիքները: Աշխատաշուկայի վերափոխումները ոչ միայն զարգացման յուրօրինակ հնարավորություններ են ստեղծում, մասնավորապես՝ զարգացող երկրների համար, այլև միաժամանակ վերածվում են նոր մարտահրավերների՝ աշխատատեղերի կրճատման, պոտենցիալ աշխատուժի պակասի, գործազրկության ռիսկերի, հմտությունների անհամապատասխանության և այլն: Աշխատաշուկային համապատասխանող և պահանջված աշխատուժ ստեղծելու, զբաղվածության բարձր մակարդակ և կայուն տնտեսական աճ ապահովելու համար այս մարտահրավերների չեզոքացումը կենսական անհրաժեշտություն է:




Գծապատկեր 2. Աշխատաշուկաների փոփոխության գործոններ[45]

[45] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf

Աղյուսակ 6.

Աշխարհում ամենապահանջված հմտությունները ներկայումս և 2024 թվականին[46]

| *Այսօր 2018/2019* | ***Աճի միտում ունեցող, 2024*** | ***Անկում ապրող, 2024*** |
|---|---|---|
| • Վերլուծական մտածողություն և նորարարություն<br>• Բարդ խնդիրների լուծում<br>• Քննադատական մտածողություն և վերլուծություն<br>• Ակտիվ ուսումնառություն և ուսումնառության ռազմավարություններ<br>• Ստեղծարարություն,յուրօրինակություն և նախաձեռնողականություն<br>• Ուշադրություն մանրուքներին, վստահելիություն | • Վերլուծական մտածողություն և նորարարություն<br>• Ակտիվ ուսումնառություն, ուսումնառության ռազմավարություննե<br>• Ստեղծագործություն, յուրօրինակություն և նախաձեռնողականություն<br>• Տեխնոլոգիաների մշակում և ծրագրավորում<br>• Քննադատական մտածողություն և վերլուծություն<br>• Բարդ խնդիրների լուծում | • Ձեռքի ճարտարություն, տոկունություն և ճշգրտություն<br>• Հիշողություն, բանավոր, լսողական և տարածական ունակություններ<br>• Ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարում<br>• Տեխնոլոգիաների տեղադրում և սպասարկում<br>• Կարդալ, գրել, մաթեմատիկա և ակտիվ լսողություն<br>• Անձնակազմի կառավարում |

Ըստ <<McKinsey>>-ի գնահատման՝ հնարավոր է, որ մինչև 2030 թ. աշխարհում 60-ից 375 միլիոն մարդ կներգրավվի մասնագիտական նոր խմբերում՝ պայմանավորված վաղ կամ միջանկյալ ավտոմատացման անհրաժեշտությամբ: Գրեթե բոլոր աշխատանքները կներառեն աաջադրանքների և գործողությունների նոր համադրություն, ինչը կպահանջի նոր հմտություններ կամ որակավորման բարձրացում[47]:

[46] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf
[47] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf

Հաշվի առնելով տնտեսական չափավոր աճը, աշխատուժի արտադրողականության բարձրացումը, ինչպես նաև բնակչության թվի շարունակական անկումը՝ Հայաստանը, արտադրողականության բարձրացումը խթանող գործոնների ճնշման ներքո, բոլոր ոլորտներում պետք է ընդունի նոր աշխատատեղերի ստեղծման մարտահրավերը: Ներկայումս Հայաստանի մարդկային կապիտալի մեծ մասը համախառն արժեքի ստեղծման գործընթացին չի մասնակցում, ինչը դանդաղեցնում է երկրի տնեսական աճը: Տնտեսական աճը կախված է կայուն և դիվերսիֆիկացված տնտեսական զարգացումից, ինչպես նաև տնտեսության մեջ առկա բարձր հմտություններով օժտված աշխատուժից, ինչը կապահովի ավելի մեծ թվով մարդկանց ներգրավվածություն արժեքի ստեղծման գործընթացին:

Երկրի կայուն և ներառական զարգացման վրա, բացի ներքին մարտահրավերներից, ազդում են նաև արտաքին գործոններ: Համաշխարհային տնտեսության կառուցվածքն արագորեն վերափոխվում է՝ մեծացնելով ապագա աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջների և կարիքների անորոշությունը: Տնտեսական, սոցիալ-դեմոգրաֆիական, տեխնոլոգիական, ինչպես նաև բնապահպանական գործոնները փոխում են գործատուների պահանջները և կարիքները՝ ստեղծելով յուրօրինակ զարգացման և առաջադեմ տնտեսություններին հասնելու հնարավորություններ:

Համաշխարհային տնտեսության և աշխատաշուկայի վերափոխումները պատշաճ կերպով ինտեգրելու, կայուն և ներառական տնտեսական աճի հնարավորություն ստեղծելու համար Հայաստանին անհրաժեշտ է տնտեսական և կրթական համակարգի զարգացման ռազմավարական տեսլականի ձևավորում:[48]

## 2.2. ՀՀ տնտեսության գործարար միջավայրի գնահատումը և հիմնախնդիրները

Ըստ ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի առաջիկա հինգ տարիներին ՀՀ կառավարության գործունեությունը միտված է լինելու Հայաստանի

[48] https://evconsulting.com/wp-content/uploads/2019/10/ACR2019-ARM-web.pdf

Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող, արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսություն կառուցելուն:

Կառավարության խնդիրներն են՝

1. Տնտեսական գործունեության հնարավորությունների ընդլայնումը, այդ թվում՝
   - ✓ Ձեռնարկատիրության, ձեռներեցության, նորարարության խթանումը, աշխատանքի, ստեղծարարության քաջալերումը՝ նաև ֆինանսական միջոցների հասանելիությունը բարձրացնելու միջոցով
   - ✓ Պետական կարգավորումների առավելագույն պարզեցումը, դրանցով պայմանավորված՝ բիզնեսի համար ժամանակային և ֆինանսական բեռի նվազեցումը
   - ✓ Գործարարության համար խոչընդոտ հանդիսացող կարգավորումների վերացումը, հարկային և մաքսային քաղաքականության պարզեցումը
   - ✓ Ներդրումային միջավայրի բարելավումը, մասնավոր ներդրումների աճի
   - ✓ Մասնավոր ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծումը, կապիտալի լիարժեք պաշտպանությունը
   - ✓ Արտաքին շուկաներին ինտեգրված տնտեսությունը՝ արտահանման ծավալների շարունակական աճը
   - ✓ Հասցեական քաղաքականությամբ և տարբերակված մոտեցումների կիրառմամբ Երևանից դուրս գործարար համայնքի զարգացումը
2. Պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, այդ թվում՝
   - ✓ Կրկնվող գործառույթների վերհանումը՝ դանդաղ, ոչ արդյունավետ, անհարկի բյուրոկրատական ընթացակարգերի կրճատումը, տարբեր պետական հիմնարկներում և ստորաբաժանումներում իրականացվող միևնույն տեսակի գործառույթների կենտրոնացումը և մեկտեղումը, գործառույթների ծապսատարության գնահատումը և ծախսերի նվազեցմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացումը

- ✓ Կառավարման համակարգում քաղաքականության մշակման, գործառույթների թվայնացման և ծրագրերի իրականացման գործառույթների տարանատումը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ամբողջական համակարգի ներդրումը
- ✓ Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի արդիականացումը, ավտոմատացումը և թվայնացոմը՝ դրանց մատուցման միասնական կենտրոնի ստեղծումը << մեկ կանգառ, մեկ պատուհան>> սկզբունքի կիրառմամբ, ինչպես նաև << միայն մեկ անգամ >> սկզբունքի կիրառումը, որը հնարավորություն կտա պետական մարմինների միջև տվյալների փոխանակման շնորհիվ քաղաքացուց ցանկացած տվյալ ստանալու միայն մեկ անգամ.
- ✓ Հանրային ֆինանսների, այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային ծրագրերի ծախսարդյունավետ կառավարումը, պետական պարտքի արդյունավետ կառավարման համակարգերի զարգացումը և բարելավումը՝ նպատակադրելով ներգրավված փոխառու միջոցներն ուղղել մարդկային ներուժի և ավելացված արժեք ապահովող ենթակառուցվածքների զարգացմանը, որը հետագայում արտահանման ծավալները մեծացնելու և տնտեսական աճի լրացուցիչ հնարավորություններ կընձեռի.
- ✓ Պետական գնումների արդար և թափանցիկ համակարգի ներդրումը ևն այլն:

3. Մարդկային ներուժի զարգացումը, ներառյալ՝

- ✓ Կրթության քաջալերումը, որակյալ կրթության ապահովումը, կրթության միջազգայնացումը
- ✓ Տնտեսության կառուցվածքային փոփոխությունների համար պահանջվող մասնագիտական ներուժի զարգացումը՝ կրթության և գիտության ոլորտների արդիականացման միջոցով և այլն:

4. Հուսալի ենթակառուցվածքների զարգացումը և հասնելիության ընդլայնումը[49]:

[49] http://www.parliament.am/Normativ_voroshum7/080219AJV065-A_havelvats.pdf

Տնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովելու համար էական նշանակություն ունի կոռուպցիայի դեմ պայքարը, որի կարևոր գործիքներից են նաև օրենքով սահմանված որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը և նրանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և համամատչելի հարթակի ներդրումը՝ ապահովելով իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը: Կառավարությունը մտադիր է մշակել այդ հարթակի ներդրման ճանապարհային քարտեզ:

Քաղաքացիների կենսամակարդակը և սոցիալական վիճակը բարելավելու, սոցիալական իրավունքները լիարժեք և արդյունավետ իրականացնելու Կառավարության քաղաքականությունը հիմնված է լինելու հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Աղքատության հաղթահարման առաջնային գործիքն աշխատանքն է: Կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունը, էապես նվազեցնել աղքատությունը[50]:

Կառավարության տնտեսական քաղաքականության անկյունաքարը Հայաստանի տնտեսության մրցակցային առավելությունների ընդլայնմամբ գլոբալ մրցունակության բարձրացումն է, գիտելիքի և նորարարությունների վրա հիմնված արդիական և կանաչ տնտեսական համակարգի ձևավորումը, Հայաստանի քաղաքացու համար արժանապատիվ աշխատանքի հնարավորության ընձեռումը, բնակչության կյանքի որակի բարձրացումը:

Տնտեսական քաղաքականության հիմքում է լինելու արտահանմանը, զբաղվածության ընդլայնմանը, աշխատանքի քաջալերմանը միտված ներդրումային քաղաքականությունը: Ըստ այդմ՝ տնտեսության կառուցվածքը պետք է էական փոփոխություններ կրի. Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերությունը պետք է դառնա տնտեսության լոկոմոտիվը:

---

[50] http://www.parliament.am/Normativ_voroshum7/080219AJV065-A_havelvats.pdf

Մասնավոր հատվածի մրցունակության ավելացումը կայուն տնտեսական զարգացման հիմնական նախապայմանն է: Մարդկանց զբաղվածության և աշխատանքային կարողությունների լիարժեք իրացման նպատակով Կառավարությունը նպաստելու է դրա համար պահանջվող միջավայրի զարգացմանը: Այդպիսի քաղաքականությունն ուղղված է լինելու մասնավոր ձեռնարկությունների համար մեծ նշանակությամբ՝ ներքին և արտաքին գործոնների կառավարման այնպիսի մեխանիզմների ձևավորմանը, որոնք նպաստելու են կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը:

Կապիտալի շուկայի և ֆինանսական ինստիտուտների զարգացումը, ֆինանսական ծառայությունների բազմազանությունը և հասանելիություն տնտեսության մասնավոր հատվածի մրցունակության կարևոր պայմաններից են:

Տնտեսության էական աճի ապահովման կարևորագույն գրավական են տնտեսական մրցակցությունը և արհեստական մենաշնորհների բացառումը: Ըստ այդմ՝ Կառավարությունն ապահովելու է տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով:

Կարգավորող մեխանիզմներն ուղղված են լինելու շուկաներում կենտրոնացվածության աստիճանի նվազեցմանը և մրցակցության ինտենսիվության բարձրացմանը: Կառավարությունը հետևողական է լինելու ապրանքների և ծառայությունների շուկաներում նոր մասնակիցների մուտքը և առաջխաղացումը խրախուսելու հարցում:

Գործարար միջավայրի վրա պետական քաղաքականության ազդեցության գնահատումը կարևորվելու է ինչպես Հայաստանում քաղաքացիների ընկալումների, այնպես էլ միջազգային համեմատականների տեսանկյունից: Այդ պատճառով, տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի վրա դրա ազդեցության գնահատականները դիտարկվելու են միջազգայնորեն ընդունված և ճանաչում ունեցող ընդհանրական ինդեքսների միջոցով: Օգտագործվեու են Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ մրցունակության ինդեքսը և

Ներառական զարգացման ինդեքսը, Համաշխարհային բանկի՝ <<Գործարարությամբ զբաղվելը>> զեկույցի գնահատումը և այլն:

Ապրանքների և ծառայությունների արտահանման զգալի աճը պետք է դառնա Հայաստանի տնտեսական առաջընթացի հիմնական շարժիչը: Ծրագրային ժամանակահատվածի ավարտին ապրանքների և ծառայությունների արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ պետք է հասնի 43-45 տոկոսի[51]:

Հայաստանում, ըստ «Doing Buiness»-ի զեկույցի 2008-2019թթ առավել դյուրին են դարձել էլեկտրականության միացումը,վարկերի հասանելիությունը և պայմանագրերի կիրառումը[52]:

---

[51] http://www.parliament.am/Normativ_voroshum7/080219AJV065-A_havelvats.pdf
[52] https://www.doingbusiness.org/en/data/exploreeconomies/armenia

Աղյուսակ 7.

ՀՀ մրցակցային ցուցանիշները 2011-2019 թթ[53].

| Ցուցանիշներ | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները | 94.3 | 94.8 | 94.86 | 97.5 | 97.8 | 72.2 | 73.6 | 96.1 |
| Սեփականության գրանցում | 92.8 | 92.9 | 92.96 | 93 | 93 | 87.3 | 87.4 | 68.0 |
| Հարկերի վճարումներ | 40.6 | 53.6 | 71.42 | 74.5 | 82.1 | 72.5 | 72.5 | 90.8 |
| Շինարարության թույլտվության տրամադրում | 64.7 | 74 | 73.7 | 73.6 | 73.8 | 69.9 | 70 | 88.6 |
| Վարկերի հասանելիություն | 68.8 | 75 | 75 | 65 | 65 | 65 | 75 | 70.0 |
| Միջազգային առևտուր վարելու դյուրինություն | 64 | 63.9 | 64.68 | 64.5 | 68.8 | 86.5 | 86.5 | 40.0 |
| Էլեկտրականության միացում | 49.3 | 49.4 | 55.98 | 64 | 64 | 70 | 73.2 | 74.0 |
| Ներդրողների պաշտպանվածություն | 50 | 50 | 63.33 | 60 | 60 | 60 | 60 | 90.8 |
| Պայմանագրերի կիրառում | 59.2 | 51.5 | 51.45 | 53.3 | 53.3 | 67.9 | 69.7 | 69.7 |

[53] https://www.doingbusiness.org/en/doingbusiness

Աղյուսակ 8.

ՀՀ մրցակցային ցուցանիշները և դրանց դինամիկան 2019-2020 թթ[54].

| Ցուցանիշներ | DB 2020 դասակարգումը | DB 2020 գնահատականը | DB 2019 գնահատականը | Գնահատականի փոփոխություն (%) |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր | 47 | 74.5 | 73.2 | ↑ 1.3 |
| Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները | 10 | 96.1 | 96.1 | … |
| Շինարարության թույլտվության տրամադրում | 62 | 73.1 | 68.0 | ↑ 5.1 |
| Էլեկտրականության միացում | 30 | 87.7 | 90.8 | ↓ 3.1 |
| Սեփականության գրանցում | 13 | 88.6 | 88.6 | … |
| Վարկերի հասանելիություն | 48 | 70.0 | 70.0 | … |
| Ներդրողների պաշտպանվածություն | 120 | 42.0 | 40.0 | ↑ 2 |
| Հարկերի վճարում | 52 | 81.5 | 74.0 | ↑ 7.5 |
| Միջազգային առևտուր վարելու դյուրինություն | 43 | 91.7 | 90.8 | ↑ 0.9 |
| Պայմանագրերի կիրառում | 30 | 69.7 | 69.7 | … |
| Անվճարունակության կարգավորում | 95 | 44.6 | 44.0 | ↑ 0.6 |

[54] https://www.doingbusiness.org/en/data/exploreeconomies/armenia




Գծապատկեր 3 . Գործարար միջավայրի կարգավորումը[55]

Գծապատկեր 3 – ի համաձայն գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է կրճատել բիզնեսի մուտքի արգելքները, ինչպիսիք են՝ գրանցումն ու աշխատողների ընդունումը, այնուհետև՝ իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչպիսիք են՝ շինարարության թույլտվության, էլեկտրաէներգիայի կայանների միացման, սեփականության գրանցման ընթացակարգերի պարզեցումն ու վարչարարական ռիսկերի վերացումը: Գրեթե բոլոր երկրներում բավականին խնդրահարույց են այնպիսի գործարքները, ինչպիսիք են հարկերի վճարումը,

[55] http://etd.asj-oa.am/5850/1/015-Anahit_Drambyan.pdf

միջսահմանային առևտուրը, ինչպես նաև առկա են ֆինանսավորման խնդիրներ՝ վարկավորումը, ներդրողների շահերի պաշտպանությունը[56]:

Աղյուսակ 9.

ՀՀ գիտական ճամպորդությունը ժամանակի միջով[57]

| **ԽՍՀՄ** | **1991-2002** | **2002-2007** | **2008-2016** | 2016-2020 |
|---|---|---|---|---|
| ՀՀ-ն պատասխանատու էր ԽՍՀՄ ռազմարդյունաբերության 30%-ի համար | Որոշ կրթական հաստատություններ սկսեցին ՏՏ ինտենսիվ դասընթացներ, առաջին կապ ԱՄՆ և Եվրոպայի հետ հիմնվեց, ԽՍՀՄ փլուզումից հետո, որի շնորհիվ սկսվեց սփյուռքից ներդրումների նոր ալիք | Որոշ բազմազգ ընկերություններ սկսեցին հիմնել մասնաճյուղեր ՀՀ-ում, ՏՏ ոլորտը աճ գրանցեց, Հմտությունների զարգացման նախաձեռնություններին տրամադրվեցին դրամաշնորհներ | Աութսորսինգից տեղափոխում կատարվեց դեպի լուծումներ և արտադրանքի զարգացում, օրենսդրական փոփոխություններ. միջազգային կորպորացիաների շրջանում Ձեռքբերումներ | Նորարական և ստեղծարար կենտրոնների ստեղծում և խթանում, կիբերանվանգություն, տեխնոլոգիական առաջընթաց, ՀՀ դիրքավորումը, որպես համաշխարհային տեխնոլոգիական հանգույց |

Տնտեսության զարգացման ներկա պայմաններում գործարար միջավայրի վարկանիշի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնք հնարավորություն են տալիս կամ բարձրացնել տվյալ երկրի և տնտեսության մրցունակությունը կամ այն դարձնել ոչ նախընտրելի՝ ներդրողների համար: Հետևաբար, ցանկացած երկրում անհրաժեշտ է ձևավորել մրցունակ տնտեսություն և ոլորտներ, որտեղ ինստիտուցիոնալ հիմքերը կխթանեն ներդրումային ծրագրերի իրագործմանը՝ միաժամանակ շարունակական

[56] http://etd.asj-oa.am/5850/1/015-Anahit_Drambyan.pdf
[57] file:///C:/Users/user/Downloads/KPMG.PDF

բարեփոխումներ իրականացնելով ոչ ֆորմալ հարաբերությունների, կոռուպցիայի կրճատման համար:

2000 թվականի նոյեմբերի 6-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության օրենք Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին, որի նպատան է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում[58]:

Ըստ այս օրենքի արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը:

Ըստ այս օրենքի արգելվում է անբարեխիղճ մրցակցությունը: Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները: Արգելվում է պետական օժանդակությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում կամ կարող է հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը կամ վնասում կամ կարող է վնասել սպառողների շահերը, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված օժանդակությունը նախատեսված է օրենքով[59]:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման նպատակով ստեղծվում է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմին՝ Հանձնաժողով:

. Հանձնաժողովի խնդիրներն են՝

[58] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=90816
[59] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=90816

ա) ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը.

բ) բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը.

գ) հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը.

դ) տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը:[60]

Հանրապետությունում, չնայած դրական փոփոխությունների, դեռևս գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը: Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել շինարարության թույլատվության տրամադրման, միջազգային առևտուր վարելու դյուրինության, հարկերի վճարումների, սեփականության գրանցման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, ստվերային տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարությամբ և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով, ուստի Մերձ Բալթյան, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրների հետագա ռազմավարությունը պետք է ուղղված լինի հարկային քաղաքականության համաձայնեցմանը, ազգային տնտեսությունների խթանմանը , այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը՝ հաշվի առնելով հարկային ինքնիշխանությունն և իրավաբանական անձանց մրցակցությունը:

Հայաստանի Հնարապետությունում հարկի հասկացությունը և հարկերի տեսակները, հարկային վեճերի լուծման կարգը, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության (այսուհետ՝ հարկային օրենսդրություն) և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերի խախտումների համար պատասխանատվությունը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում են հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և հարկային

---

[60] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=90816

հարաբերություններ կարգավորող մյուս իրավական ակտերը սահմանվում են ՀՀ հարկերի մասին օրենքով[61]:

Հայաստանի Հանրապետությունում հարկատեսակներն են՝

1. պետական հարկերը՝
- շահութահարկ
- եկամտային հարկ
- ակցիզային հարկ
- ավելացված արժեքի հարկ
2. տեղական հարկերը՝
- գույքահարկ
- հողի հարկ
- հյուրանոցային հարկ[62]:

Հարկային օրենսդրությամբ կարող են սահմանվել հարկային արտոնությունների հետևյալ տեսակները՝

- հարկվող օբյեկտի նվազեցում,
- հարկի դրույքաչափի նվազեցում,
- հարկի նվազեցում,
- հարկի հաշվարկման ժամկետի հետաձգում,
- հարկի վճարման ժամկետի հետաձգում,
- հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետների հետաձգում,
- բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար

[61] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80504
[62] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80504

տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների վճարման պարտավորության հետաձգում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկի կամ վարկային կազմակերպության պարտատերերի պահանջների սառեցման (մորատորիումի) ժամանակահատվածում:

- Հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հարկ վճարողներին փոխհատուցվում է վճարված (գանձված) հարկի գումարը:
- Հարկային արտոնությունները սահմանվում են օրենքով, եթե առանձին հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ:
- Գործող հարկային արտոնության դադարեցման կամ փոփոխման դեպքում սահմանվում է տվյալ արտոնությունից օգտվող հարկ վճարողների նկատմամբ դրա կիրառման կարգը[63]:

ԱՀԿ հիմնարար համաձայնագրի առաջնային նպատակը առևտրի ազատականացումն է՝ զարգացող երկրներին ֆինանսական (ներդրումների իրականացում), տեխնոլոգիական (արտադրության կազմակերպման նոր տեխնոլոգիաների և մենեջմենթի կիրառում) և փորձի փոխանակմանն անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու միջոցով : Ըստ այդմ, ԱՀԿ-ն, զարգացող երկրների հետ բազմակողմ առևտրական հարաբերություններ հաստատելով և միջազգային առևտրում խտրական մոտեցումները բացառելով, միջոցներ է ձեռնարկում վերջիններիս առաջատար դիրքեր մղելու ուղղությամբ: Սա քաղաքական և գործարար իշխանությունների, ինչպես նաև քաղաքակիրթ հասարակության համատեղ պատասխանատվությունն է՝ զարգացող երկրներից արտագաղթը դեպի զարգացած երկըրներ կրճատելու նպատակով: Առաջին հայացքից նման հնարավորությունը գայթակղիչ է, սակայն ԱՀԿ-ին անդամակցումը շուկայի նորեկներին պարտավորեցնում է որոշակի պայմաններ, ինչպիսիք են արտահանման տարբերակումը (որը պահանջում է նոր շուկաներում առևտրի ներուժի կանխատեսման նպատակով նորարարա- կան տեխնոլոգիաների, կապիտալի և նոր գիտելիքների կիրառում), բարձրարժեք շուկաներում մասնագիտացումը (բարձր կենսամակարդակ ունեցող երկրների

---

[63] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80504

պահանջարկի ուսումնասիրությունը և դրա հետևողականորեն բավարարումը), ինչպես նաև սահմանների բացումը և տնտեսական ազատության ապահովումը (ներքին շուկայի թափանցիկության ապահովումը): Նշյալը լուրջ մարտահրավեր է զարգացող երկրների համար, սակայն մյուս կողմից այն ընձեռում է զարգացման նոր հնարավորություններ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԱՀԿ-ին անդամակցելով՝ Հայաստանը պետք է կարողանար արդյունավետորեն մասնակցել համաշխարհային տնտեսական գլոբալացման գործընթացին: Դա պետք է նպաստեր նաև կապիտալի ներհոսքին, արտադրության բնագավառում նորագույն արտադրական և կառավարչական տեխնոլոգիաների կիրառմանը, ինչպես նաև ՀՀ կազմակերպությունների միջազգային առևտրային կապերի հաստատման ու խորացման ճանապարհով ՀՀ արտահանման ընդլայնմանը: Սակայն հատկանշական է, որ ԱՀԿ-ի ընձեռած հնարավորությունները լիարժեքորեն չեն իրացվում, որի պատճառը միջազգային ասպարեզում ՀՀ կերպարի և հեղինակության ցածր մակարդակն է ղինակության ցածր մակարդակն է: Մասնավորապես միջազգային պրակտիկայում ներդրողներին գրավելու հիմնական պայմաններն են երկրների բացության գործակիցը, գործարար կլիման, տեխնոլոգիական մրցունակությունը և դեֆոլտային էմիտենտի վարկանիշը: Ելնելով այն իրողությունից, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էապես փոփոխել է «աշխարհի դիմագիծն» ու առանձին երկրների հնարավորությունները վերոնշյալ ցուցանիշների առումով, ինչպես նաև այն կանխատեսումները, որ երկրները հնարավորություն չունեն արագորեն հաղթահարելու ստեղծված իրավիճակը, փորձենք ներկայացնել բացառապես հետճգնաժամային վարկանիշներում Հայաստանի զբաղեցրած դիրքերը: Միջազգային ասպարեզում նշյալ ցուցանիշների գծով ամենահեղինակավոր վարկանիշները հրապարակվում են այսպես կոչված G 20-ի հանդիպումների ընթացքում կազմակերպվող «Համաշխարհային տնտեսական ֆորումի» շրջանակում : «Համաշխարհային տնտեսական ֆորումի» տնտեսական ազատության ինդեքսների վարկանիշը ներառում է հետևյալ չորս հիմնական բաղադրիչները՝ շուկա մուտքի ազատության ինդեքսը, ներմուծման պետական

կարգավորման գործիքները կամ մաքսային վարչարարության ինդեքսը, գործարար կլիման, տրանսպորտա-հաղորդակցման ենթակառուցվածքները[64]:

Պատրաստի արտադրանքի առումով կարելի է նշել, որ զարգացած երկրներ արտահանվում են հիմնականում պայմանագրային արտադրության արդյունքները (ժամացույցների թափք և մասեր, տրիկոտաժ, ռադիոդետալներ և այլն): Նման իրավիճակի հիմնական պատճառը միջազգային շուկայում ՀՀ և ՀՀ կազմակերպությունների իմիջի և հեղինակության բացակայությունն է, որն էլ հանգեցնում է միջազգային շուկաներում «Պատրաստված է Հայաստանում» պիտակի ցածր ճանաչելիությանն ու հայրենական արտադրանքի ներկայացման և միջազգային շուկաներում դիրքավորման բարդություններին: Հայտնի է, որ շուկայում ներկայացվող ապրանքները հիմնականում իրացվում են ոչ միայն դրանց որակյալ լինելու (որի գովազդը, ի դեպ, ոչ միշտ է համապատասխանում իրականությանը), այլև բարձր ճանաչելիության շնորհիվ: Դրա համար կազմակերպությանն անհրաժեշտ է բարձրացնել սեփական ապրանքի ճանաչելիությունը միջազգային շուկայում, որի համար այն պետք է 30-ից մինչև 50 տարի ներկայացված լինի և գովազդվի շուկայում, որը ներկայիս պայմաններում ՀՀ կազմակերպությունների համար խիստ կասկածելի է: Ուստի ՀՀ կառավարությունը և գործարար միջավայրը ստիպված են առավել սեղմ ժամկետներում մշակելու հայկական ապրանքանիշերի և «Պատրաստված է Հայաստանում» պիտակի հեղինակայնացման մարտավարություն, որը, սակայն, կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ: Շուկայում ապրանքների դիրքավորման և առաջանցման ապահովման գործընթացների արագացման հիմնական գործիքը ագրեսիվ գովազդային քաղաքականությունն է, սակայն գովազդն արտադրողի համար լրացուցիչ ծախս է, որը գումարվելու է արտադրանքի ինքնարժեքին, ինչը միջազգային շուկայում նպաստելու է գնի տեսանկյունից ապրանքների մրցունակության նվազմանը: Մյուս կողմից էլ միանշանակ է, որ ՀՀ արտադրողների ապրանքանիշային ռազմավարությունները ներկայումս չեն արդարացնում արտահանողների ակնկալիքներն արտերկրում, քանզի այն պետք է ներկայացնի առաջին հերթին երկիրը՝

[64] http://lraber.asj-oa.am/698/1/14._Manasyan_-_148.pdf

իր աշխարհագրական դիրքը, պատմական ուղին (որոշ չափով) և մշակութային ձեռքբերումները: Միայն այդ դեպքում է հնարավոր միջազգային շուկայում երկրի համար ձևավորել դրական իմիջ: Կառավարության խնդիրը տվյալ դեպքում միջազգային մրցունակության տեսանկյունից ՀՀ տնտեսության ճյուղերի մրցունակության վերլուծության և առավել մրցունակ ճյուղերում նմանատիպ ռազմավարությունների խթանման ծրագրերի մշակման մեջ է: Հատկանշական է, որ ներկայումս ՀՀ-ն կորցրել է իբրև էժան աշխատուժով երկրի նախկինում ունեցած համարումը, ինչը նույնպես դրամի արժևորման հետևանքներից է: Նշյալը ֆինանսական և մակրոտնտեսական ցուցանիշների անկայունության և տրանսպորտային հավելյալ ծախսերի անհրաժեշտության հետ էապես նվազեցնում է ՀՀում ուղղակի կապիտալ ներդրումների գրավչությունը, այսինքն՝ հեղինակավոր կազմակերպությունների կողմից ՀՀ-ում արտադրանք թողարկելու և երրորդ երկրներ արտահանելու ցանկությունը[65]:

Կայուն մակրոտնտեսական միջավայրը (ՀՆԱ-ի Համախառն տարեկան աճի տեմպը, մինչև 2020 թվականը Հայաստանի համար 3,2% է ՝ և Համաշխարհային ՀՆԱ-ի Համախառն տարեկան աճի տեմպը 2,7%), գնաճի ցածր մակարդակը և կայուն փոխարժեքը ապահովում են ներդրումների համար կանխատեսելի և բարենպաստ հիմք: Հստակ գրավոր օրենսդրությունը, միջազգային ստանդարտներին համապատասխան և բարենպաստ հարկային ռեժիմը ստեղծում են ողջունելի միջավայր օտարերկրյա ներդրումների համար:

Կառավարությունը ձգտում է կատարել իր օրենսդրական կարգավորումները: Հայաստանը Եվրոպական երկրների շարքում ունի ամենաբարենպաստ օրենսդրական ռեժիմը օտարերկրյա ներդրումների համար:Օտարերկրյա ներդրողներին թույլատրվում է ունենալ 100 % սեփականության իրավունք: Հայաստանն ապահովում է ազատ տարադրամի փոխանակում և շահույթ ազատ հայրենադարձություն: Ոչ ռեզիդենտների ներդրումներն ամբողջությամբ պաշտպանված են:

[65] http://lraber.asj-oa.am/698/1/14._Manasyan_-_148.pdf

Հայաստանյան ֆինանսական ոլորտն ապահովում է բարենպաստ ենթակառուցվածք երկրում ներդրումներ կատարելու համար: Շուկան բավականին զարգացած է: Միջազգային բանկային և ֆինանսական ընկերությունների խմբերը շուկայում շատ լավ ներկայացված են: Ոլորտը կարգավորող օրենքները համապատասխանում են միջազգային ստանդարտներին: Վերջին 15 տարիների ընթացքում չի եղել որևէ անվճարունակության դեպք, ինչը ցույց է տալիս շուկայի կայունությունը:

Հայաստանն ունի միջազգայնորեն ճանաչված բարձր մակարդակ ունեցող ներդրումային ազատություն: Հայաստանը համաձայն Heritage հիմնադրամի դասակարգման, ներդրումային ազատության ցուցանիշով զբաղեցնում է 21-րդ տեղը 180 երկրների շարքում : Հայաստանն առաջարկում է հարկային բեռի ցածր մակարդակ և տարբեր հարկային խթաններ (հիմնված ոլորտի, գտնվելու վայրի և բիզնեսի չափերի վրա) : Հայաստան վարում է արագ և պարզ բիզնեսի գրանցման ընթացակարգեր;

ԵՏՄ երկրների ավելի քան 180 միլիոն սպառողներին գյուղատնտեսական մթերքների վաճառքի հնարավորություն, նվազագույն մաքսային վճարներով և առանց բյուրոկրատական խոչընդոտների: Կառավարության աջակցությամբ հարկային խթանների հնարավոր ներդրումը կարող է նպաստել գյուղատնտեսության ոլորտում շահութաբերության բարձրացմանը: Ներկայումս, ընդհանուր առմամբ հայտնի են օտարերկրյա ներդրումների հնարավորությամբ 278 մլն դոլլարի նախագծեր:

Նախատեսվում է Հայաստան արտասահմանյան այցելուների թիվը մինչև 2020 թվականը դարձնել կրկնակի, ինչը կավելացնի տուրիստական ենթակառուցվածքների և զվարճանքի վայրերի նկատմամբ պահանջարկը, դասակարգելով, որպես աշխարհի ամենաապահով և գրավիչ զբոսաշրջային ուղղություններից մեկը: Ներկայումս ծրագրված է 800 մլն դոլար կազմող նախագծեր, որոնցում կա օտարերկրյա ներդրումների հնարավորություն:

Այլընտրանքային էներգետիկայի ոլորտը, ի շնորհիվ Հայաստանի բնական վերականգնվող ազբյուրների, շատ արագ է զարգանում: Սպառումն իրականցվում է

ինչպես ներքին շուկայում, այնպես էլ հարևան երկրներ արտահանելու միջոցով: Փոքր ՀԷԿ-երում էլեկտրաէներգիայի արտադրությունը վերջին 5 տարվա ընթացքում աճել է 54 %-ով: Կառավարությունը վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրողներին տրամադրում է  նշանակալից խթաններ, ինչը նրանց համար ստեղծում է բարենպաստ պայմաններ: Ներկայումս ներդրումային հնարավորությամբ հայտարարված նախագծերի ընդհանուր գումարը կազմում է 596 մլն դոլար:

Հայազգի ՏՏ մասնագետների որակավորումը հաստատած է այնպիսի միջազգային ՏՏ կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Microsoft-ը, IBM-ը և Synopsys-ը: Սա աճող ոլորտ է, որն ունի արտահանման հնարավորություններ: Կառավարության զգալի աջակցությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում ոլորտի զարգացման համար (0 % շահութահարկ, 10 % եկամտահարկ):

Հայաստանը տարածաշրջանում տրանսպորտային հանգույցի դեր ունի և ԵՄ, ԵՏՄ, Մերձավոր Արևելքի և Ասիական երկրների տարանցիկ գործընկերն է, ինչը պաշտպանված է ներկայիս ենթակառուցվածքով:  Բեռների և տուրիստական հոսքերի սպասվող աճով պայմանավորված, Հայաստանը ձգտում է զարգացնել տրանսպորտային ենթակառուցվածքները, ինչն իրականացվում է PPP ծրագրերի միջոցով: Ներկայումս օտարերկրյա ներդրումների հնարավորությամբ հայտարարագրված նախագծերի ընդհանուր գումարը կազմում է 3,1 միլիարդ դոլար[66]:

[66] Armenia. Great country. Smart opportunities/ KPMG www.kpmg.am




Գծապատկեր 4. ՀՀ իրական ՀՆԱ ( մլրդ դրամ) [67]

Հայաստանյան մակրոտնտեսական պայմանները ներդրողներին մի շարք առավելություններ են առաջարկում: Բացի այդ, Հայաստանը բաց է օտարերկրյա ներդրումների համար: ՕՈՒՆ մասնաբաժինը 2015 թվականին կազմում էր 1,6 %, իսկ 2018 թ. 3,1 %: Ներկայումս ՀՀ խոշորագույն ներդրողներն են Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան և Արգենտինան: Հիմնական ներդրումներն արվել են էներգետիկայի և հեռահաղորդակցման ոլորտում:

ԵՏՄ անդամակցությունը Հայաստանին հնարավորություն է տալիս մուտք գործել 3 տրիլիոն դոլլար ՀՆԱ ունեցող շուկա, որտեղ կան 180 մլն-ից ավել սպառողներ:

ՀՀ-ն առաջին հերթին շոշափելի արդյունքներ ունի ԵՏՄ անդամ երկրներ արտահանման ոլորտում:

Հայ ինժեներներն ավանդաբար եղել են բարձրորակ մասնագետներ և ունեցել են բարձր պահանջարկ ՝ որակյալ կրթությամբ առավել մատչելի աշխատուժ լինելու շնորհիվ. աշխատավարձերը 27%-ով ավելի ցածր են, քան հարևան երկրներում:

[67] Armenia. Great country. Smart opportunities/ KPMG www.kpmg.am

ՀՀ գործարար միջավայրի հիմնական ուժեղ կողմերն են՝

- Կրության խթանմանն ուղղված նախաձեռնություններ, տեխնոլոգիաներ և հետազոտական ծառայություններ, ներառյալ՝ տեխնոլոգիական միջնակարգ դպրոցների, լաբորատորիաների հիմնում, «Թումո» ստեղծագործական կենտրոնի հիմնում, Տեխնոլոգիաների, ճարտարագիտության լաբորատորիաներ և այլն:
- Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում ամենաբարձր կրթական մակարդակ ունեցող երկրներից մեկն է՝ աշխատուժի 50 %-ն ունի բարձրագույն կրթություն
- Աշխատավարձի մակարդակը այլ երկրների համեմատ ( Ռուսաստան, Բելառուս ) 27 %-ով ավելի ցածր է:[68]

[68] Armenia. Great country. Smart opportunities/ KPMG www.kpmg.am

# Գլուխ 3. ՀՀ համաշխարհային մրցունակության դիրքերի բարելավումը, որպես գործարար միջավայրի միջազգայնացման հիմք

## 3.1. ՀՀ մրցունակության բարձրացմանը նպաստող գործարար միջավայրի բարելավման ուղիները:

ՀՀ տնտեսության կարևոր նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, որին հասնելու համար անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականցնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

ՀՀ-ն, լինելով փոքր, բաց պետություն, չի կարող խուսափել արտաքին գործոնների ազդեցությունից, մասնավորապես՝ տարածաշրջանային և հետանցումային երկրներում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրավիճակներից, ինտերացիոն, փոխարժեքային տատանումներից, քաղաքական դիրքորոշումից, ռազմական մարտահրավերներից; Ավելին, ՀՀ տնտեսության զարգացման վրա ազդում են տարածաշրջանային երկրների ռեսուրսային ապրանքների (նավթ, դիզվառելիք, բենզին, գազի) գները, Ռուսաստանում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական գործընթացները[69]:

Հայաստանի կառավարությունն իրականացնում է գործարար միջավայրի խորը և համապարփակ բարեփոխումներ՝ օտարերկրյա ներդրողների և գործարարների համար առաջարկելով բիզնեսի համար նպաստավոր միջավայր: Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային

[69] http://etd.asj-oa.am/5850/1/015-Anahit_Drambyan.pdf

շեշտադրումն ուղղելով ձեռնարկատիրության զարգացմանը, ռիսկերի վրա հիմնված ստուգումների համակարգի կայացմանը, կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի բարելավմանը, վարչարարության և տնտեսվարողների ծախսերի նվազեցմանը[70]:

Մրցակցությունը հանդիսանում է կազմակերպություններում իրականացվող նորարարությունների հիմնական խթանը: Ներդրումային միջավայրի կարգավորման բարեփոխումների շրջանակներում անհրաժեշտ է պարզեցնել տեխնիկական ստանդարտները և պահանջները: Պետք է շարունակվեն կարգավորող և վերահսկող մարմինների գործունեության կանոնակարգման աշխատանքները, որոնք թույլ չեն տա այդ ինստիտուտներն օգտագործել անբարեխիղճ մրցակցության նպատակով: Անհրաժեշտ է ուժեղացնել ստուգումների անցկացման ժամկետների համար սահմանված նորմերի վերահսկողությունը: Տնտեսության իրական հատվածի պետական աջակցության մեխանիզմների բարելավումը պետք է նպատակաուղղված լինի պետական միջոցների օգտագործման արդյունավետության ու թափանցիկության բարձրացմանը, ռազմավարական խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ արտահանման խթանումը և ներդրումների դիվերսիֆիկացումը: Միջոցների տրամադրումը պետք է կախված կլինի կոնկրետ արդյունքներից և կազմակերպվի մրցութային կարգով: Պետք է կազմել համալիր հաշվետվություն և վերլուծել պետական աջակցության տարբեր ձևերը, ներառյալ շուկայի մասնակիցներին տրվող արտոնությունները և առավելությունները: Ընդ որում, որոշ արտադրողների նկատմամբ ցուցաբերվող աջակցությունը չպետք է խեղաթյուրի շուկայական մրցակցության պայմանները: Կառավարությանն առաջին հերթին անհրաժեշտ է ընդլայնել արտահանման աջակցության ծավալները և բարելավել աջակցության ժամանակ կիրառվող գործիքները: Մասնավորապես, պետք է էականորեն ընդլայնել պետական ֆինանսավորումը՝ ուղղված նոր արտաքին շուկաների գրավման խթանմանը, արտահանման վարկավորման ծավալների ընդլայնմանը, առավել լայնորեն ուսումնասիրել արտաքին շուկաները և կոնկրետ ապրանքների շարժը նոր շուկաներ:

---

[70] http://councils.ysu.am/pdf_files/015/2013/015-Koryun_Shahbazyan.pdf

Գոյություն ունեցող կազմակերպությունների միջև մրցակցության զարգացման հետ մեկտեղ, նորարարությունների խթանման կարևոր պայման է նաև նոր կազմակերպությունների ի հայտ գալը: Զարգացած շուկայական տնտեսությունների մեծամասնության համար նորարարությունների ամենաhզոր աղբյուրներից մեկը նոր կազմակերպություններն են: Այս առումով, պետական ծրագրերի կարևորագույն նպատակներից մեկը պետք է համարվի նոր կազմակերպությունների համար շուկա մուտք գործելու պայմանների մեղմացումը, որից անմիջականորեն կախված է նորարարական ներուժը և ՀՀ արտահանման ու տնտեսության դիվերսիֆիկացման խնդրի լուծումը: Հողի արդյունավետ շուկաները հիմք են հանդիսանում սեփականատիրական հարաբերությունների և դրանց հիման վրա ներդրումային ծրագրերի ձևավորման համար: Դրանք հատկապես կարևոր են հաջողակ և նոր կազմակերպությունների համար, որոնք հողամասի կարիք ունեն արտադրության ընդլայնման և նոր շինարարության համար: Պետական ծրագրի նպատակը պետք է լինի հողի և անշարժ գույքի լիարժեք շուկայի արագ զարգացումը, որը հաջող ներդրումային գործընթացի կարևորագույն պայմանն է: Զարգացման ֆինանսական շուկաները կապիտալի արդյունավետ կենտրոնացման շնորհիվ խթանում են տնտեսական զարգացումը: Ավելին, արդյունավետ ֆինանսական համակարգը, բացահայտելով և աջակցելով ներդրողների հեռանկարային բիզնես գաղափարները և նախագծերը, հանդիսանում է նորարարական գործընթացների ամրապնդման կարևոր պայման: Ներկայումս այս ոլորտի հիմնական խնդիրներն են վարկառուների իրավունքների պաշտպանվածության մակարդակի անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին, բանկային ծառայությունների շուկայում թույլ մրցակցությունը, վարկային կազմակերպությունների գործունեության ոչ բավարար թափանցիկությունը: Ազգային ֆինանսական համակարգի շրջանակներում ընդլայնվում են բաժնետիրական ընկերությունների երկարաժամկետ ֆինանսավորման հնարավորությունները: Ֆոնդային բորսան, նախկինի պես, չի հանդիսանում ներդրումների ֆինանսավորման էական աղբյուր: Մասնավորապես, ընկերությունների համար երկարաժամկետ ֆինանսական ռեսուրսների հասանելիության ընդլայնման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ

միջոցառումները՝ զարգացման պետական ինստիտուտների կապիտալի մեծացում, պետական աջակցության ընդլայնում և վենչուրային կապիտալի հարկման կատարելագործում, լիզինգի աջակցության մեխանիզմների արդյունավետության բարձրացում, հիփոթեքային շուկայի զարգացման միջոցով կենսաթոշակային, ապահովագրական և այլ ինստիտուցիոնալ ներդրողների միջոցները հասանելի դարձնել բանկային համակարգի համար՝ բնակչության երկարաժամկետ վարկերի ֆինանսավորման նպատակով, արագ տեմպերով պետք է զարգանա ապահովագրական ծառայությունների շուկան, ներառյալ գույքային ապահովագրությունը, որը հետագայում կարող է դառնալ ներդրումային ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր: Հարկային և մաքսային համակարգերի բարեփոխումների ընթացքում անհրաժեշտ է ապահովել, որպեսզի այդ համակարգերը գործեն ելնելով արդարության սկզբունքից, համապատասխան կարողություններ ունենան ստվերային տնտեսության կրճատման համար և միջազգային առումով լինեն մրցունակ՝ նպաստելով ներդրումային միջավայրի բարելավմանը: Այս առումով հարկային և մաքսային համակարգերի կատարելագործման կարևոր ուղղություններ պետք է դառնան՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարեցտարի ավելացումը՝ հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ հատվածի կրճատման միջոցով, հարկային հսկողության արդյունավետության բարձրացումը՝ ռիսկային բարձր գոտում գտնվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցումների կիրառմամբ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակների ընդլայնումը՝ հարկային խախտումների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման նպատակով, մաքսային համակարգի տեխնիկական և մասնագիտական կարողությունների շարունակական ընդլայնումը, եվրոպական երկրներում կիրառվող սահմանների համալիր կառավարման համակարգի լավագույն սկզբունքներին համահունչ պետական սահմանի անցման կետերում մաքսային ընթացակարգերի մշակումը և ներդրումը՝ հաշվի առնելով նաև «մեկ կանգառ/մեկ պատուհան» սկզբունքը, բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների համար պարզեցված մաքսային ընթացակարգերի կիրառման համակարգի մշակման

և ներդրման աշխատանքների իրականացումը՝ անհրաժեշտ օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմք ստեղծելով «լիազորված տնտեսվարող օպերատորների» համակարգի ներդրման և կիրառման համար, փոքր ու միջին բիզնեսի համար պարզեցված հարկային դաշտի ապահովումը և հարկային բեռի շարունակաբար տեղափոխումը դեպի խոշոր հարկատուներ, հարկային վարչարարության պարզեցումը, էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման լայն կիրառումը, հարկ վճարողների շահերի պաշտպանությունը և նրանց սպասարկման որակի բարձրացումը, ինչը թույլ կտա հարկման հարաբերություններում ընդլայնել ինքնագնահատման համակարգի կիրառումը, հարկային և մաքսային մարմինների տեխնիկական ապահովվածության մակարդակի, ինչպես նաև այդ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման մեխանիզմների բարելավումը՝ ստեղծելով տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացման գործուն տեղեկատվական համակարգ, սահմանային անցակետերի, առաջին հերթին մաքսային տեղամասերի ժամանակակից պահանջներին համապատասխան արդիականացում[71]:

2013 թվականի մարտի 7-ին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին (Տես՝ Հավելված 1):

Կարծում եմ, գործարար միջավայրի բարելավմանն ուղղված այս բոլոր միջոցառումներն միտված էին Համաշխարհային բանկի Doing business վարկանիշային աղյուսակներում առավել բարենպաստ դիրք գրավելուն: Բարեփոխումների ծրագրում ներառվել էին զեկույցում առկա գրեթե բոլոր չափորոշիչներին վերաբերող ասպեկտներ: Այս ծրագիրն էական փոփոխություն մտցրեց ՀՀ գործարար միջավայրի առավել բարենպաստ դառնալու գործում, սակայն Doing business վարկանիշային աղյուսակներում ՀՀ դիրքերը անընդհատ տատանվել են հետագա տարիներ՝ հաշվի առնելով գործարար միջավայրում առկա բացերն ու

[71] http://councils.ysu.am/pdf_files/015/2013/015-Koryun_Shahbazyan.pdf

թերությունները (մրցունակության աստիճանը Հայաստանում 2007 թվականից մինչև 2019 թվականը միջինում հասել է 84,31-ի, 2011-ին հասնելով բոլոր ժամանակի լավագույն ցուցանիշին՝ 98-ի, իսկ 2019-ին ՝ ռեկորդային ցածր մակարդակի՝ 69[72]):

ՀՀ գործարար միջավայրի բարելավման և մրցունակության բարձրացման մեջ էական դեր ունի Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Զարգաման Ազգային Կենտրոնը և Ներդրումների Աջակցության Կենտրոնը:[73]

Ներդրումների աջակցման կենտրոնը Հայաստանում ներդրումներ իրականացնելու մտադրություն ունեցող տեղական և օտարերկրյա գործարարներին տրամադրում է համալիր աջակցություն մի շարք ուղղություններով.

- Հայաստանի ներդրումային հնարավորությունների և պայմանների, այդ թվում՝ պետական խթանների և այլ ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- Ուղեկցում ներդրումներ իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացներում, աջակցություն պետական մարմինների հետ աշխատանքներում,
- Ներդրումների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների, այդ թվում՝ առկա հողատարածքների և այլ անշարժ գույքի, օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքի, համաֆինանսավորման աղբյուրների և հնարավոր ռեզիդենտ գործընկերների վերաբերյալ խորհրդատվություն,
- Հավանական ներդրողներին ներդրումային ծրագրերի տրամադրում՝ ըստ վերջիններիս հետաքրքրությունների շրջանակի,

[72]https://www.doingbusiness.org//
[73] https://www.smednc.am/

- Ներդրումների իրականացման ընթացքում առաջացող խնդիրներին օպերատիվ արձագանքման ապահովում[74]:

Գործարար խորհրդատվությունը, ուսուցողական և վերապատրաստման դասընթացները նպաստում են սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրությանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը, գործարար հմտությունների զարգացմանը, ինչը հանգեցնում է ՓՄՁ սուբյեկտների գործունեության արդյունավետության և մրցունակության բաձրացմանը:

Ֆինանսական աջակցության ծրագրերը նպատակաուղղված են սկսնակ գործարարներին և ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով գրավադրման խնդրի հաղթահարմանը, ՀՀ մարզերում, հատկապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունների ընդլայնմանն ու բարելավմանը:

Ամբողջ աշխարհում 7.7 միլիարդ սպառողներից միայն մոտ 0.4%-ն է ապրում Հայաստանում: Ընկերության արտադրանքը կամ ծառայությունը ավելի մեծ թվով սպառողներին հասանելի դարձնելու համար անհրաժեշտ է մեծացնել շահույթը, կրճատել շուկայից կախվածությունը, ապա միջազգայնացրել բիզնեսը:[75]

Ձեռնարկությունների եվրոպական ցանցը միջազգայնացման հավակնություն ունեցող փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությանը միտված ամենամեծ ցանցն է աշխարհում:

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ), որը Հայաստանում պաշտոնապես սկսել է իր գործունեությունը 2008 թվականի փետրվարից, հյուրընկալող կառույցը Հայաստանում հանդիսանում է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը: Ցանցն իր մեջ է ներառում ավելի քան 65 անդամ երկրների շուրջ 600 գործընկեր

[74] https://www.smednc.am/hy/inner/812
[75] https://www.smednc.am/hy/programs

կազմակերպություններ՝ տրամադրելով բազմաթիվ մասնագիտացված գործարար ծառայություններ իր շահառու կազմակերպություններին:

Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի գործունեությունն ուղղված է հայ գործարարների միջազգայնացմանը և եվրոպական շուկա մուտք գործելու հնարավորությունների ընդլայնմանը, նրանց նորարարական կարողությունների զարգացմանը և տեխնոլոգիական կատարելագործմանը:

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հիմնապաշարը ներառում է ավելի քան 5800 գործարար/տեխնոլոգիական/գիտահետազոտական առաջարկներ և հարցումներ[76]:

Էրասմուսը երիտասարդ ձեռնարկատերերի փոխանակման ծրագիր է, որն ուղղված է օգնելու սկսնակ ձեռնարկատերերին Եվրամիության երկրների ձեռնարկատրիություններից մեկում վերապատրաստվելու միջոցով ձեռք բերել փոքր և միջին ձեռնարկությունները կառավարելու համապատասխան հմտություններ: Այն նպաստում է նորարարական հմտությունների բարելավմանը և խրախուսում միջսահմանային գիտելիքների և փորձի փոխանակումը ձեռնարկատերերի միջև:

Էրասմուս Երիտասարդ ձեռնարկատերերի համար ծրագիրը հասանելի է դարձել հայաստանյան ձեռնարկատերերի համար 2016 թվականից COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ:

Ծրագիրը հնարավորություն է ընձեռում Նոր (Սկսնակ) ձեռնարկատերերին 1-6 ամիս ժամանակահատվածով հյուրընկալվել եվրոպական որևէ երկրի փորձառու (հյուրընկալող) ձեռնարկատերերի մոտ՝ փոխանակվելով գիտելիքներով և բիզնես գաղափարներով[77]:

---

[76] https://www.smednc.am/hy/programs
[77] https://www.smednc.am/hy/inner/625

Նոր (Սկսնակ) ձեռնարկատերերը ձեռք են բերում մի շարք առավելություններ, նրանք կվերապատրաստվեն 36 մասնակից երկրներից մեկի փոքր կամ միջին չափի ձեռնարկությունում: Դա կհեշտացնի նրանց գործունեության հաջող մեկնարկը կամ կամրապնդի նրանց նորաստեղծ ձեռնարկությունը: Երիտասարդ ձեռնարկատերերը կօգտվեն նաև նոր շուկաներ մուտք գործելու առավելությունից և արտերկրի ձեռնարկատերերի հետ համագործակցելու պոտենցիալ հնարավորությունից:

Հյուրընկալող ձեռնարկատերերը կօգտվեն մոտիվացված Սկսնակ ձեռնարկատերերի նոր գաղափարներից և դրանք կգործածեն իրենց ձեռնարկությունում:

«Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիրը ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որն իրականացվում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իր գործընկերների հետ համագործակցությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2016թ. դեկտեմբերի 13-ին և տևել է 2 տարի:[78]

Ծրագրի հիմնական նպատակն է խթանել տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակությունը և ստեղծել կայուն զբաղվածության հնարավորություններ: Թիրախային վայրերը՝ՀՀ Լոռու, Սյունիքի և Արմավիրի մարզերը: Թիրախային ոլորտները՝սննդի վերամշակում և տուրիզմ: Թիրախային խումբը՝ սկսնակ և գործող ՓՄՁ-ներ:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է.

- Ստեղծել նոր կայուն աշխատատեղեր,
- Բարձրացնել տեղական ձեռնարկությունների մրցունակությունը,
- Ստեղծել նոր ձեռնարկություններ[79]:

[78] https://www.smednc.am/hy/inner/529
[79] https://www.smednc.am/hy/inner/529

«Հաջող սկիզբ» ծրագրերի միջոցով աջակցություն կցուցաբերվի սկսնակ գործարարներին՝ իրենց գաղափարների կյանքի կոչման ճանապարհին: Գործող ՓՄՁ-ները կստանան բիզնեսի զարգացման ծառայություններ՝ նրանց մրցունակության և աշխատատեղերի ստեղծման կարողությունների զարգացման նպատակով: Տեղական իշխանությունների և բիզնեսի զարգացման ծառայություններ մատուցողների կարողությունների զարգացում: Կարողությունների զարգացման միջոցառումներ կիրականացվնե տեղական տնտեսական զարգացման և հատկապես ՓՄՁ աջակցության ծրագրերի մշակման և իրականացման հարցերում:

2013թ. հուլիսից Հայաստանում մեկնարկել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» հնգամյա ծրագիրը:

Այս ծրագրի գլխավոր նպատակը մեկն է. հզորացնել գյուղական համայնքները՝ բացահայտելով և իրացնելով նրանցից յուրաքանչյուրի թաքնված ներուժը: Այդ նպատակին հասնելու համար առաջիկա 5 տարիների ընթացքում ծրագրի թիմը ձեռնարկելու է հետևյալ նպատակային քայլերը.

- բացահայտելու է գյուղական համայնքներից յուրաքանչյուրի մրցակցային առավելությունները և միավորելով բնակիչների ջանքերը՝ իրականացնելու է այդ ներուժը,
- այնպիսի գիտելիք և հմտություն է հաղորդելու ապագա ձեռնարկատերերին, որոնք կօգնեն նրանց ստեղծել մրցունակ և կայուն բիզնես մոդելներ,
- նպաստելու է վարկային և ֆինանսական միջոցների ներհոսքին դեպի գյուղական համայնքներ,
- համաֆինանսավորման սկզբունքով տրամադրելու է դրամաշնորհներ արտահանման ներուժ ունեցող ձեռնարկություններին՝ նոր տեխնոլոգիաների ներմուծման և սարքավորումների ձեռքբերման համար,

- այդ համայնքներում գործող ձեռնարկությունների համար նոր շուկաներ է գտնելու և սպառման նոր դռներ բացելու գյուղում արտադրված ապրանքների և ծառայությունների առջև,
- օժանդակելու է համայնքային նոր ենթակառուցվածքների ստեղծման և հների արդիականացման աշխատանքներին,
- առավելագույնս նվազեցնելու է մարդկային գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և բնության քմահաճույքների ազդեցությունը գյուղական բիզնեսի վրա,
- հատուկ համար ստեղծելով աշխատատեղեր և գործարարությամբ զբաղվելու նոր հնարավորություններ[80]:

Կարծում եմ, որ ՓՄՁ ոլորտում կատարված այս բարեփոխումները դրական կանդրադառնան ՀՀ գործարար միջավայրի վրա: ՀՀ-ում ընկերությունների առյուծի բաժինը պատկանում է խոշոր ձեռնարկատերերին, իսկ փոքր և միջին ձեռնարկությունները՝ չկարողնալով դիմակայոլ մրցակցությանը դուրս են մղվում մրցակցությունից: Պետության կողմից տրամադրվող արտոնություններն, ինչպես նաև տարբեր ծրագրերը կօգնեն ՓՄՁ-ներին ամրապնդել իրենց դիրքերը տնտեսությունում՝ ստեղծելով ավելի մեծ հավելյալ արժեք:

## 3.2. ՀՀ ներդրումային միջավայրի բարելավումը, որպես համաշխարհային մրցունակության բարձրացման վրա ազդող հիմնական գործոն:

Ներդրումների խթանումը Հայաստանի տնտեսական քաղաքականության առանցքային ոլորտներից է: Հիմնական նպատակն է օտարերկրյա ներդրողների համար խթաններ ստեղծելը՝ արտահանումը մեծացնելով և աշխատատեղերի ավելացմամբ, բարենպաստ ներդրումային և բիզնես միջավայրի ստեղծմամբ, կարգավորող շրջանակի թափանցիկության բարձրացմամբ և կայուն տնտեսական աճի

[80] https://www.smednc.am/hy/inner/586

ապահովմամբ: Հայաստանը հայտարարեց «բաց դռների» ներդրումային քաղաքականություն, որը սահմանվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքում և Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգում: Հայաստանի Հանրապետությունը զարգացող երկրների շարքում ունի առավել բաց ներդրումային ռեժիմներից մեկը:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը օտարերկրյա ներդրողներին պաշտպանում է գույքի ազգայնացումից կամ յուրացումից, բացառությամբ բնական կամ պետական արտակարգ իրավիճակների, բացառապես դատական կարգով և պարտադիր փոխհատուցմամբ: Հայաստանի Սահմանադրությունն էլ ավելի հեռու է գնում՝ պահանջելով, որ օտարվող գույքը փոխհատուցվի նախապես՝ վճարված գույքը սեփականատիրոջից վերցնելուց առաջ: Օտարերկրյա ներդրողները իրավունք ունեն փոխհատուցում ստանալ պետական մարմինների կամ պետական պաշտոնյաների անօրինական գործողությունների կամ նրանց պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում առաջացած վնասների ու կորուստների (ներառյալ կորցրած շահույթի) համար:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը երաշխիքներ է տալիս օտարերկրյա ներդրողներին ազգայնական վերաբերմունքից և խտրականությունից պաշտպանվելու համար: Օտարերկրյա ներդրողների համար կիրառվող օրենքները չեն կարող պակաս բարենպաստ լինել, քան ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը և ներդրումային գործունեությունը կարգավորող օրենքները: Սահմանափակումներ չկան Հայաստանում որևէ տնտեսական գործունեության մեջ օտարերկրյա ներդրողների մասնակցության կամ օտարերկրյա ներդրողների կողմից ձեռք բերված տեղական բիզնեսի վերաբերյալ: Միակ բացառությունն այն է, որ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք չունեն Հայաստանում տիրապետել հողատարածքին: Այնուամենայնիվ, օտարերկրյա քաղաքացիները իրավունք ունեն հողօգտագործել վարձակալության պայմանագրերի հիման վրա: Բացի այդ, նրանք իրավունք ունեն ունենալ ՀՀ հողի վրա կառուցված կառույցներ և օգտագործել վերականգնվող և

չվերականգնվող բնական պաշարները՝ Կառավարության հետ կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա:

Օտարերկրյա ներդրումների մասին օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու դեպքում, ներդրման պահին գործող օրենքը կարող է, օտարերկրյա ներդրողի խնդրանքով, շարունակել կիրառվել ներդրման օրվանից մինչև հինգ տարի: «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքով սահմանվում է, որ ներդրումային վեճերը, որտեղ պետությունը կողմերից մեկն է, ենթակա են լուծման Հայաստանի դատարաններում: Բոլոր մյուս վեճերը, կարող են քննարկվել Հայաստանի դատարաններում կամ քննի ցանկացած այլ մարմին, կամ կողմերի համաձայնությամբ քննվի արբիտրաժային դատարաններում: Հայաստանը Ներդրումային վեճերի միջազգային կոնվենցիայի կողմերից է, ինչը թույլ է տալիս լուծել վեճերը Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնում (ICSID):

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության ՝ փողի փոխակերպման և փոխանցման կամ կապիտալի վերադարձի, շահույթի, շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների կամ կառավարման վարձավճարների ու տեխնիկական ծառայությունների ստացան սահմանափակումներ չկան: Օտարերկրյա ներդրողներին և աշխատողներին երաշխավորված է ազատորեն վերադարձնել իրենց ունեցվածքը, եկամուտը կամ այլ ակտիվները, որոնք առաջացել են իրենց ներդրումների արդյունքում, վճարման ենթակա բոլոր հարկերը վճարելուց հետո:

Հայաստանն ունի արժույթի փոխանակման լիբերալ համակարգ, և, ընդհանուր առմամբ, որևէ սահմանափակում չկա ներդրումների հետ կապված միջոցների փոխարկման կամ փոխանցման հետ կապված՝ ազատ շուկայական փոխարժեքով փոխարկելու համար: Արտարժույթը լայնորեն հասանելի է, և տեղական արժույթը ՝ հայկական դրամը՝ ազատորեն փոխարկելի է: Թույլատրվում է նաև արտարժույթային հաշիվների պահպանումը Հայաստանում[81]:

81 http://investinarmenia.am/ru/investment-incentives-ru

Օտարերկրյա ներդրողները կարող են օգտվել հետևյալ ներդրումային առավելություններից.

1.Կարող են տիրապետել բաժնետոմսերի 100% -ին:

2.Ներդրումների համար հատուկ թույլտվություններ չեն պահանջվում:

3.Չնայած այն հանգամանքին, որ օտարերկրյա քաղաքացիները չեն կարող հող ունենալ Հայաստանում, նրանց առաջարկվում է երկարաժամկետ վարձակալության պայմանագրեր:

4.Ներդրումային ծրագրերի համար ներմուծվող ավելի քան 300 միլիոն դրամ կազմող ապրանքների ԱԱՀ-ի վճարումները հետաձգվում են երեք տարով:

5.Արտահանման տուրքեր և սահմանափակումներ չկան:

6.Հայաստանը կիրառում է զրոյական սակագին «Ազատ շրջանառության» և «վերաարտահանման» մաքսային ռեժիմների շրջանակներում արտահանվող ապրանքների և ծառայությունների վրա:

7.Օրենքում փոփոխություններ կատարելու դեպքում օտարերկրյա ներդրողները կարող են ընտրել, թե որ օրենքն օգտագործվի՝ մինչև հինգ տարի ժամկետով:

9.Գործում է արտարժույթի ազատ փոխանակում:

10.Դրամական փոխանցումների սահմանափակումներ չկան:

12.Ներդրումների համար ոլորտային կամ աշխարհագրական սահմանափակումներ չկան[82]:

Հայաստանը ունի կայուն մակրոտնտեսական քաղաքականություն և ունի ընդհանուր կայուն մակրոտնտեսական դիրք, որը ճանաչվում է միջազգային

[82] http://investinarmenia.am/ru/investment-incentives-ru

կազմակերպությունների կողմից: Տնտեսական օրենքներն ու կանոնակարգերը համապատասխանում են միջազգային ստանդարտներին և ԱՀԿ պահանջներին:

Հայաստանի բանկային համակարգը գործում է Բազել II ստանդարտի համաձայն: Առկա են անվճար հաշիվների գործառնություններ արտարժույթով: Դրամական փոխանցումների սահմանափակումներ չկան: Բորսայի կազմակերպիչն է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն, որը հանդիսանում է պաշտոնապես գրանցված միջազգային NASDAQ OMX Group- ի մաս: NASDAQ OMX Արմենիան անդամակցում է Եվրասիական բորսաների ֆեդերացիայի (FEAFB) և Անկախ պետությունների Համագործակցության երկրների բորսաների միջազգային ասոցիացիայի (MAB CIS):

Հայաստանի լավ պատրաստված և որակավորված կադրերը լայնորեն ճանաչված են օտարերկրյա ներդրողների շրջանում: Լինելով համեմատաբար էժան, տեղական աշխատուժը ակնհայտ մրցակցային առավելություն է:

Հայաստանն ունի շատ մեծ սփյուռք. Ավելի քան 6 միլիոն հայեր, որոնք հիմնականում ապրում են Մերձավոր Արևելքում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում, ինչը ներդրողների պոտենցիալ շրջանակ է կազմում, որոնք ավելի շատ հակված են ներդրումներ կատարել իրենց պատմական հայրենիքում:

Հայաստանը հյուրընկալության և անվտանգության բարձր մակարդակ ունեցող երկիր է[83]:

Քանի որ Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է արտաքին առևտրից, Հայաստանը զգալի ջանքեր է գործադրում արտասահմանյան ուղղակի ներդրումներ ներգրավելու համար: Հայաստանի կառավարությունը բաց դռների քաղաքականություն է վարում և ապահովում է իրավական պաշտպանություն օտարերկրյա ներդրումների համար: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը բարենպաստ բիզնես միջավայր է ապահովում օտարերկրյա ներդրումների համար, թույլ է տալիս

[83] http://investinarmenia.am/ru/investment-incentives-ru

օտարերկրյա կապիտալի անսահմանափակ մասնակցություն հայկական ձեռնարկություններում և ապահովում դրանց պաշտպանությունը:

Օտարերկրյա ներդրողները իրավունք ունեն ներդրումներ կատարել՝

- ✓ Արտասահմանյան սեփականատիրոջը (ներառյալ ներկայացուցչությունները, մասնաճյուղերը և մասնաճյուղերը) պատկանող ձեռնարկությունում կամ գոյություն ունեցող ընկերության ձեռքբերման մեջ կամ էլ ստեղծել նոր ընկերություն:
- ✓ Հայկական ընկերությունների կամ քաղաքացիների մասնակցությամբ նոր համատեղ ձեռնարկության ստեղծման մեջ կամ գոյություն ունեցող ընկերությունում բաժնետոմսերի ձեռքբերման միջոցով:
- ✓ Տարբեր տեսակի արժեթղթերի ձեռքբերման միջոցով:
- ✓ Ստանալով հողերի օգտագործման թույլտվություն կամ Հայաստանի բնական ռեսուրսների օգտագործման համար կոնցեսիոն պայմանագիր՝ հայկական ընկերությունների կամ քաղաքացիների մասնակցությամբ:
- ✓ Այլ գույքային իրավունքների ձեռքբերման միջոցով:

Հայաստանի արտաքին առևտրի քաղաքականությունը ուղղված է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը և առևտրային ռեժիմների ազատականացմանը: Որպես Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ (2003 թ. Փետրվարի 5-ից), Հայաստանը կրճատել է մաքսային բեռը և վերափոխում է գործող մաքսային համակարգը: Որպես օրինակ կարող ենք դիտարկել մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգը, ՀՀ ներկրվող ապրանքների ստուգման «միջանցքների» համակարգը, ինչպես նաև ներմուծման համար պահանջվող փաստաթղթերի քանակի կրճատելումը: Այսօր ՀՀ-ն ունի առևտրի և ներդրումների ազատական ռեժիմ: 2.7% մաքսատուրքերի կիրառելի միջին տոկոսադրույքը ամենացածրներից մեկն է՝ ԱՀԿ անդամների շրջանակում: Որպես ԱՀԿ անդամ, Հայաստանը վայելում է առավել բարենպաստ ազգի (MFN) ռեժիմը և ունի MFN ռեժիմ ԱՀԿ բոլոր անդամ երկրների հետ: Իր հերթին, Հայաստանը տրամադրում է MFN ռեժիմը և ազգային ռեժիմը տնտեսության

գրեթե բոլոր ոլորտներում գործող օտարերկրյա ներդրողներին: Հայաստանում մաքսային քաղաքականության իրականացման պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն: Մաքսային ռեժիմներն ու ընթացակարգերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով և այլ իրավական ակտերով, որոնք համապատասխանում են ԱՀԿ համաձայնագրերով և այլ միջազգային պայմանագրերով սահմանված կանոններին: Հայաստանը Համաշխարհային մաքսային կազմակերպության անդամ է: Ապրանքներ Հայաստան ներմուծելիս կիրառվում է միայն երկու մաքսատուրքի դրույքաչափ ՝ 0% կամ 10%: 0% տոկոսադրույքը վերաբերում է կապիտալ ապրանքների ներմուծմանը, իսկ 10% -ը ՝ սպառողական ապրանքների ներմուծմանը: Բոլոր ներմուծումները ենթակա են ԱԱՀ 20% դրույքաչափին, իսկ ալկոհոլային խմիչքները, ծխախոտային արտադրանքները և վառելիքը ենթակա են ակցիզային հարկերի կիրառմանը: Ներմուծման համար չկան քանակական սահմանափակումներ, սակագնային քվոտաներ կամ արտոնագրման պահանջներ: Բացի այդ, Հայաստանը չի կիրառում ներմուծման նվազագույն գների համակարգ: Հայաստանում արտահանումը չի հարկվում, արտահանման համար նաև լիցենզավորման պահանջներ արտահանման վճարներ, ԱԱՀ պարտավորություններ կամ սահմանափակումներ չկան[84]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում ներդրումային շուկայի ձևավորումը ունի հետևյալ բնութագրիչները.

1. բաժանված են վարկային և ներդրումային գործունեությունները,

2. բանկային-վարկային, ֆինանսական և ներդրումային ինստիտուտները դեռևս էական դեր չեն խաղում տնտեսության իրական հատվածի ներդրումների ֆինանսավորման համար,

[84] http://investinarmenia.am/ru/import-and-export-regime-ru

3. սեփականաշնորհման հետևանքով արդյունաբերության հատվածը կայուն չէ: Կրճատվում է մանր բաժնետերերի տեսակարար կշիռը, ընդլայնվում է խոշոր բաժնետերերի չափաբաժինը,

4. մանր բաժնետերերը և ներդրողները չունեն կորպորացիաների վերահսկման մեխանիզմ,

5. ձևավորվել է ներդրումային շուկայի օլիգոպոլիական մոդել,

6. սահմանափակ է օտարերկրյա ներդրումների ծավալը,

7. բացակայում է պետության կողմից ներդրումային շուկայի կարգավորումը[85]:

Շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանում յուրաքանչյուր բարեփոխում այնքանով է հաջողվում, որքանով այն համակարգված և նպատակասլաց է իրականացվում, համապատասխանում է օբյեկտիվ տնտեսական օրենքների պահանջներին, բխում է համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից և նպաստում է ազգային տնտեսության զարգացմանը:

Այս առումով Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է.

- համաշխարհային շուկայում ներդրումների զարգացման միտումները և նրանց ներառումը Հայաստանի տնտեսության զարգացման ծրագրերում,
- օտարերկրյա ներդրումների հոսք ապահովելու համար համապատասխան միջավայրի ապահովումը,
- ներդրումային քաղաքականության իրական կողմնորոշիչների սահմանումը,
- ներքին ներդրումների խթանումը ներքին խնայողությունների աճը, ինչպես նաև նպաստել սպառողական հոգեբանության հաղթահարմանը,

[85] http://investinarmenia.am/ru/import-and-export-regime-ru

- տնտեսության առանձին ճյուղերում Հայաստանի բացարձակ և հարաբերական առավելությունների լիարժեք օգտագործումը և այլն[86]:

Կարծում եմ ներդրումների ներգրավման ՀՀ հիմնական առավելություններից մեկը որակյալ աշխատուժն է, ինչը ներդրողներին հնարավորություն կտա, մրցակից ընկերությունների համեմատ ցածր աշխատավարձ վճարելով՝ ապահովել արտադրանքի ցածր ինքնարժեք և գնային մրցունակություն՝ հատկապես միջազգային շուկայում իրենց արտադրանքը ներկայացնելիս:

ՀՀ-ում ներդրումների համար շահավետ ոլորտներն են հանդիսանում՝

- Բարձր տեխնոլոգիաների էլեկտրոնիկայի նախագծումը,
- Հանքարդյունաբերությունը և մետալուրգիան,
- Էլեկտրական էներգիայի համակարգերը,
- Քիմիական արտադրությունը,
- թեթև արդյունաբերությունը,
- բանկային ծառայությունները,
- համակարգչային ծրագրային ապահովման մշակումը,
- սննդի արտադրությունը և փաթեթավորումը,
- զբոսաշրջությունը[87]:

ՀՀ ներդրումային միջավայրն առավել պարզ հասկանալու համար դիտարկենք ՀՀ-ում կատարված ներդրումների վիճակագրությունը ( Տես՝ Հավելված 2,3,4 ):

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ՀՀ կառավարության ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է կազմում և դիտարկվում է որպես տնտեսական զարգացման կարևորագույն միջոցներից մեկը: Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող

[86] http://investinarmenia.am/ru/import-and-export-regime-ru
[87] http://www.ysu.am/files/SSS_Journal_New_7,%20pp.76-82.pdf

միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը, և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի ապահովմանը: Ներդրումային նպատակաուղղված քաղաքականության մշակմամբ և նրա արդյունավետ իրականացմամբ է մեծապես պայմանավորված երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացման հետագա ընթացքը: Ինչպես և բոլոր զարգացող երկրներում, Հայաստանում իրականացվող ներդրումների աճի ապահովումը լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, շուկայական տնտեսությանը հատուկ նոու-հաուների ներգրավումը (ընդհանուր և ֆինանսական կառավարում, շուկայավարում, նոր տեխնոլոգիաներ, հմտություններ և այլն), նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը, այդ շուկաներ մուտք գործելու հնարավորությունները և այլն:

ՀՀ կառավարությունը, ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների խթանման նպատակով, ձգտում է իրականացնել մի շարք առաջնահերթ քայլեր: Երկրի տնտեսության տարածքային անհավասարակշիռ զարգացումից խուսափելու համար երկրի մարզերում ներդրումների խրախուսման նպատակով իրականացվում են նպատակային միջոցառումներ՝ տնտեսական ենթակառուցվածքների, կապի և հաղորդակցման զարգացում, խթանման և աջակցման արդյունավետ համակարգի կիրառում: Դրա հետ մեկտեղ կշարունակվեն մշակվել և իրականացվել տարածքային զարգացման համալիր ծրագրեր: Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների ժամանակակից միտումները՝ գիտատար ճյուղերում ներդրումների կշռի առաջընթաց մեծացումը, քայլեր են ձեռնարկվում է փոփոխելու երկրի մրցակցային առավելությունների կառուցվածքը: Առանձնակի ուշադրություն է դարձվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և դրանց լայնածավալ կիրառման վրա, որոնք ներկայումս երկրի մրցակցային առավելությունների բարելավման հիմնական ուղղություններից են հանդիսանում: Սփյուռքի հետ ավելի ուղղորդված համագործակցության իրականացում՝ երկուստեք

վստահելի և շահավետ միջավայրի ձևավորմամբ: Միջազգային չափանիշներին համապատասխան ապահովագրական համակարգի ձևավորում՝ ներդրումները հնարավոր ռիսկերից ապահովագրելու համար[88]:

Ստեղծվել են հատուկ կառույցներ՝ Զարգացման հայկական գործակալությունը և ՀՀ ներդրումների խրախուսման և պաշտպանության պետական խորհուրդը՝ օտարերկրյա ներդրումները խրախուսելու և ներդրողների շահերը պաշտպանելու նպատակով: Բացի այդ, ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարությունում գործում է ներդրումային քաղաքականության վարչությունը, որի հիմնական խնդիրներն են պետական ներդրումային քաղաքականության մշակումը և իրագործումը: Օտարերկրյա ներդրումների ոլորտը կանոնակարգող իրավական դաշտի կարևոր մաս են հանդիսանում նաև ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության միջկառավարական համաձայնագրերը: Այժմ Հայաստանի Հանրապետությունը ներդրումների խրախուսման և պաշտպանության երկկողմ համաձայնագրեր ունի 35 երկրների հետ: Միաժամանակ, ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից ներդրումների խրախուսման և պաշտպանության համաձայնագրեր են նախապատրաստվում ևս 26 երկրների հետ: Հայաստանը “Ազատ Առևտրի Համաձայնագրեր” է ստորագրել Վրաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Մոլդովայի, ՌԴ-ի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ: Համաձայն վերոհիշյալ Համաձայնագրերի դրույթների, Հայաստանի և Բելառուսի, Վրաստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, ՌԴ-ի, Տաջիկստանի և Ուկրաինայի միջև իրականացվող ապրանքների առևտուրը ազատված է մաքսատուրքերի վճարումից:

Հայաստանի ներդրումային միջավայրի առավելություններն են.

- Արագ աճող տնտեսություն:
- Դյուրին մուտք ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ:
- Լավ կրթված, հմուտ և դյուրին վերապատրաստվող աշխատուժ:

[88] http://www.mfa.am/hy/business/

Հայաստանում աշխատանքային շուկայի բնորոշ հատկանիշները՝ աշխատուժի արժեքը, աշխատուժի կրթվածության և մասնագիտական պատրաստվածության աստիճանը, հանդիսանում են օտարերկրյա ներդրողների համար ամենագրավիչ գործոններից մեկը: Սակայն վերջին 10- ամյակում Հայաստանում ծանրսոցիալ-տնտեսական պայմանների պատճառով զգալի չափերի է հասել բնակչության հատկապես տնտեսապես ակտիվ ու որակյալ մասնագետների արտագաղթը: Վերջինիս նման տեմպերի պահպանման դեպքում կարող է էապես նվազել աշխատանքային ռեսուրսների գծով ներդրումային միջավայրի առավելությունը:

- Ուժեղ սփյուռքի գոյություն: Փորձը ցույց է տալիս, որ Հայաստանում իրականացվող օտարերկրյա ներդրումային նախագծերի մեծ մասը իրականացվել է անմիջականորեն սփյուռքի մասնակցությամբ կամ նրա ֆինանսավորմամբ:
- Ոչ մի սահմանափակում անձնակազմի ընտրության հարցում:
- Կորպորատիվ հարկային արտոնություններ այն օտարերկրյա ընկերություններին, որոնց կանոնադրական կապիտալում ներդրումների ծավալը կազմում է առնվազն 500 մլն դրամ: Այս դեպքում հաջորդ 2 տարիներին գործակալան ծի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտը ազատվում է շահութահարկից, իսկ 3-րդից մինչև 10-րդ տարին շահութահարկի գումարը նվազումէ 50%-ով: Ի դեպ պետք է նկատել, որ եթե այս արտոնությունը կիրառելի է զուտ օտարերկրյա կապիտալով ընկերությունների պարագայում, ապա համատեղ ձեռնարկությունների դեպքում կարող ենք ասել, որ այն չի կատարում իր դերը:
- Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ընկերությունների համար եկամտահարկի արտոնություններ :
- Էներգակիրների մրցունակ արժեք:
- Անդամակցություն “ Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը ”:
- Առևտրի ազատական ռեժիմ:
- Ներմուծման նկատմամ քանակական սահմանափակումների և լիցենզիաների բացակայություն:
- Արտահանման տուրքերի բացակայություն և արտահանված ապրանքների և ծառայությունների համար ԱԱՀ-ի հետվերադարձ:

- Արտարժույթի ազատ փոխանակում:
- Շահույթի ազատ հայրենադարձում:
- Ազատականացված արտաքին առևտրային ռեժիմ, որը ներառում է ներմուծման ժամանակ կիրառվող պարզեցված երկտարիֆային համակարգ (0% և 10%)[89]:

Ներդրումների ներգրավման խթանումը, նրանց զգալի ծավալների առկայությունը տնտեսությունում եղել և մնում է խիստ որոշիչ ՀՀ տնտեսական զարգացման ընդունելի տեմպերի և ծավալների ապահովման համար:

ՀՀ-ում ներկայումս արագ զարգանում են զբոսաշրջությունը, ՏՏ ( Տեղեկատվական տեխնոլոգիաներ ) և մի շարք այլ ոլորտներ: Այստեղ կարելի է առանձնացնել զբոսաշրջության ոլորտը՝ որպես ՀՀ տնտեսության մրցակցային առավելություն: Զբոսաշրջությունն այն ոլորտն է, որը սահուն կերպով զարգանում է տնտեսության զարգացմանը զուգընթաց: Սակայն այն չի բխում երկրի երկարաժամկետ զարգացման պահանջներից: Այնուամենայնիվ, ՀՀ կարող է համեմատաբար քիչ ծախսերով մեծ հաջողությունների հասնել հենց այս ոլորտներում՝ ներդրումներ կատարելով դրանց ենթակառուցվածքների բարելավման գործում և ներդրումային խթաններ առաջարկել ներդրողներին:

Կարևոր է նշել Հայաստանի աշխարհագրական դիրքը: Մի կողմից այն գտնվում է արևելք-արևմուտք , հյուսիս-հարավ խաչմերուկում և կարող է կրել թե’ արևմուտքին և թե’ արևելքին բնորոշ գործարար հոգեբանության տարրեր, սակայն մյուս կողմից փակ են սահմանները չորս հարևաններից երկուսի հետ (Ադրբեջան, Թուրքիա), և բացակայում են թե’ տնտեսական և թե’ դիվանագիտական հարաբերությունները: Այս պարագայում երկրի ռիսկն աճում է, ինչը բնականաբար բացասաբար է անդրադառնում օտարերկրյա ներդրումների ներգրավման գործին:

Վերջերս ՀՀ ձեռնամուխ եղավ մի կենսական ծրագրի՝ Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման իրականացմանը: Ըստ ծրագրի՝ ՀՀ ելք կունենա դեպի

[89] https://www.gov.am/files/docs/1321.pdf

Պարսից ծոց, ամբողջ Միջին Ասիա: Կարելի է ասել, որ սրանով լուծվում է առնվազն երկու խնդիր՝

1. սպառողական լայն շուկայի ստեղծում ( ինչը շատ վառ էր արտահայտված Իռլանդիայի օրինակում ),

2. երկրի ռիսկային գնահատականների կրճատում:

Սակայն այստեղ գլխավոր հանգամանքներից է տրանսպորտային ծախսերի էական կրճատումը և երկրի ենթակառուցվածքների զարգացումը:

Ներկայումս ՀՀ-ում լավ հիմքեր կան գիտելիքահեն և գիտատարարտադրություն ստեղծելու համար, քանի որ բավականին հաջող զարգանում են SS, ծրագրային ապահովումը և այլ գիտատար ոլորտներ, որի համար գլխավոր նախադրյալը որակյալ աշխատուժի առկայությունն է: Սակայն այն խիստ կարիք ունի ժամանակակից տեխնոլոգիական հմտություններին համապատասխան վերապատրաստման և օտար լեզուների իմացության ընդլայնման ու խորացման: Կարևոր է չմոռանալ ևս մեկ հանգամանք՝ երկրի վարկանիշը: Այս առումով ՀՀ պետք է միջազգային հարաբերությունների մակարդակով հատուկ տակտիկական քաղաքականությամբ, միջոցառումերով, տարբեր բարձր մակարդակներով բարձրացնի ՀՀ միջազգային հեղինակությունը, վարած քաղաքականության նկատմամբ վստահությունը, և , առհասարակ, վստահությունը ՀՀ կառավարության նկատմամբ: Այն պետք է ապահովվի ոչ թե կարճաժամկետ հատվածում, այլ երկարաժամկետ ծրագրեր մշակվեն և իրականացվեն, որն ՕՈւՆ ներգրավման համար անփոխարինելի գործոն է:

Ներկայումս ՀՀ առաջարկում է մի շարք ներդրումային շարժառիթները՝ տնտեսական կայունություն, բարենպաստ ներդրումային օրենսդրություն, ներդրումային երաշխիքներ, ՕՈՒՆ ներգրավման կառավարության ամուր որդեգրում, լավ կրթված, որակավորված աշխատուժ և գիտության վրա հիմնված որակ, օտարերկրյա սեփականության սահմանափակում չկա էլեկտրաէներգիայի մրցունակ գներ, մուտք ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ, արտահանման մաքսատուրք չկա,

արտարժույթ իրավադ փոխարկում, աշխատակազմի անսահմանափակ համալրում, փողային անսահմանափակ փոխադրումներ: Սակայն քաղաքական վերջին իրադարձությունները՝ մասնավորապես 2018 թվականի ապրիլին կատարված հեղափոխությունը երկակի ազդեցություն կարող է թողնել ՀՀ գործարար միջավայրի մասին օտարերկրյա ներդրողների պատկերացումների վրա. Մի կողմից չկա նախկին կոռումպացված կառավարությունը, կիրառվում է ակտիվ հակամենաշնորհային քաղաքականություն, մյուս կողից քաղաքական անկայուն վիճակը չի կարող գրավիչ լինել ՕՈՒՆ համար:Այսպիսով, ամփոփելով հնարավոր է կատարել հետևյալ եզրակացությունները՝ ՀՀ կառավարությունը այս ոլորտում հաջողություններ արձանագրելու համար այլ հավասար պայմաններում պետք է տրամադրի հարկային և մաքսային տարբեր արտոնություններ օտարերկրյա ներդրողին, կատարի ծախսերի համաֆինանսավորում, զարգացնի ենթակառուցվածքներն ու հեռահաղորդակցությունը, ներդրում կատարի կրթության բնագավառում, որը որակյալ աշխատուժի նախապայմանն է, ապահովի լայն սպառողական շուկա, նպատակահարմար է՝ Իռլանդիայի և Չեխիայի օրինակով ստեղծի մի գործակալություն՝ անկախ պետական մարմիններից, որը կզբաղվի ՕՈւՆ ներգրավման և գրանցման գործընթացներով և օտարերկրյա ներդրողներին այլ ծառայություններ տրամադրելով[90]:

Մեր կարծիքով ներդրումային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է.

- Առանձնացնել ներդրողների խմբերը ու նրանց նկատմամբ խրախուսման միջոցները՝ յուրաքանչյուր խմբի առանձնահատկություններն առավելագույնս հաշվի առնելու նպատակով,
- ՕՈՒՆ-ի ներգրավման քաղաքականության մասը դարձնել նորարարարական տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը, հատկապես՝ պետական ձեռնարկությունների վաճառքի դեպքում,

[90] https://www.gov.am/am/

- Բարձրակարգ հետներդրումային ծառայություններ մատուցել գործող ներդրողների համար, քանի որ ՀՀ ներդրումային միջավայրի վերաբերյալ վերջիններիս դրական կարծիքը, նպաստում է ստացված եկամուտների վերներդրման ծավալների աճին ու կարևոր գործոն է հանդիսանում պոտենցիալ ներդրողների ներգրավման համար,
- Ձեռնարկել գործողություններ՝ ուղղված ներքին և միջպետական մակարդակով օտարերկրյա ներդրողների շահերի պաշտպանության համար իրավական դաշտի ստեղծմանը, քաղաքական ռիսկերի հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու համար,
- Ներկայացնել ՀՀ ներդրումային միջավայրի մասին ամբողջական տեղեկատվություն գործող ու պոտենցիալ ներդրողներին (անգլերենով օրենքների, շուկայական և այլ նյութերի վերլուծություն),
- Կիրառել ակտիվ հակամենաշնորհային քաղաքականություն պետական մակարդակով,
- Քայլեր մշակել՝ երկրում կոռուպցիայի մակարդակի նվազեցման ուղղությամբ:

Մեր կարծիքով այս խնդիրների իրագործումը հնարավորություն կտա ոչ միայն մեծացնել ներդրումների ծավալները, այլև բարձրացնել վերջիններիս արդյունավետությունը, որը կարևոր նախապայման է մեր երկրի զարգացման համար: Ներդրումների ծավալների աճը կնպաստի ՀՀ համաշխարհային մրցունակության դիրքերի բարձրացմանը և ՀՀ գործարար միջավայրի միջազգայնացմանը:

# Եզրակացություններ և առաջարկություններ

Գործարար միջավայրի միջազգայնացումը և մրցակցային դիրքերի բարելավումը ժամանակակից աշխարհում երկրների տնտեսական զարգացման և համաշխարհային շուկայում երկրի դիրքերի բարելավման ամենակարևոր գրավականներից է: ՀՀ տնտեսության զարգացման կարևոր նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, որին հասնելու համար անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականցնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

Գործարար միջավայրի զարգացման համար անհրաժեշտ է կրճատել բիզնեսի մուտքի արգելքները, ինչպիսիք են՝ գրանցումն ու աշխատողների ընդունումը, այնուհետև՝ իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչպիսիք են՝ շինարարության թույլտվության, էլեկտրաէներգիայի կայանների միացման, սեփականության գրանցման ընթացակարգերի պարզեցումն ու վարչարարական ռիսկերի վերացումը: Գրեթե բոլոր երկրներում բավականին խնդրահարույց են այնպիսի գործարքները, ինչպիսիք են հարկերի վճարումը, միջսահմանային առևտուրը, ինչպես նաև առկա են ֆինանսավորման խնդիրներ՝ վարկավորումը, ներդրողների շահերի պաշտպանությունը[91]:

Հանրապետությունում, չնայած դրական փոփոխությունների, դեռևս գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը: Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել շինարարության թույլատվության տրամադրման, միջազգային առևտուր վարելու դյուրինության, հարկերի վճարումների, սեփականության գրանցման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, ստվերային

---

[91] http://etd.asj-oa.am/5850/1/015-Anahit_Drambyan.pdf

տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարությամբ և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով, ուստի Մերձ Բալթյան, ԱՊՀ և ԵԱՏՄ անդամ երկրների հետագա ռազմավարությունը պետք է ուղղված լինի հարկային քաղաքականության համաձայնեցմանը, ազգային տնտեսությունների խթանմանը , այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը՝ հաշվի առնելով հարկային ինքնիշխանությունն և իրավաբանական անձանց մրցակցությունը:

ՀՀ գործարար միջավայրի հիմնական ուժեղ կողմերն են՝

- Կրության խթանմանն ուղղված նախաձեռնություններ, տեխնոլոգիաներ և հետազոտական ծառայություններ, ներառյալ՝ տեխնոլոգիական միջնակարգ դպրոցների, լաբորատորիաների հիմնում, «Թումո» ստեղծագործական կենտրոնի հիմնում, Տեխնոլոգիաների, ճարտարագիտության լաբորատորիաներ և այլն:
- Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում ամենաբարձր կրթական մակարդակ ունեցող երկրներից մեկն է՝ աշխատուժի 50 %-ն ունի բարձրագույն կրթություն
- Աշխատավարձի մակարդակը այլ երկրների համեմատ ( Ռուսաստան, Բելառուս ) 27 %-ով ավելի ցածր է:[92]

Կարծում եմ, գործարար միջավայրի բարելավմանն ուղղված այս բոլոր միջոցառումներն միտված էին Համաշխարհային բանկի Doing business վարկանիշային աղյուսակներում առավել բարենպաստ դիրք գրավելուն: Բարեփոխումների ծրագրում ներառվել էին զեկույցում առկա գրեթե բոլոր չափորոշիչներին վերաբերող ասպեկտներ: Այս ծրագիրն էական փոփոխություն մտցրեց ՀՀ գործարար միջավայրի առավել բարենպաստ դառնալու գործում, սակայն Doing business վարկանիշային աղյուսակներում ՀՀ դիրքերը անընդհատ տատանվել են հետագա տարիներ՝ հաշվի առնելով գործարար միջավայրում ակա բացերն ու թերությունները (մրցունակության աստիճանը Հայաստանում 2007 թվականից մինչև

[92] Armenia. Great country. Smart opportunities/ KPMG www.kpmg.am

2019 թվականը միջինում հասել է 84,31-ի, 2011-ին հասնելով բոլոր ժամանակի լավագույն ցուցանիշին՝ 98-ի, իսկ 2019-ին ՝ ռեկորդային ցածր մակարդակի՝ 69[93]):

ՀՀ գործարար միջավայրի բարելավման և մրցունակության բարձրացման մեջ էական դեր ունի Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Զարգացման Ազգային Կենտրոնը և Ներդրումների Աջակցության Կենտրոնը:[94]

Կարծում եմ, որ ՓՄՁ ոլորտում կատարված այս բարեփոխումները դրական կանդրադառնան ՀՀ գործարար միջավայրի վրա: ՀՀ-ում ընկերությունների առյուծի բաժինը պատկանում է խոշոր ձեռնարկատերերին, իսկ փոքր և միջին ձեռնարկությունները՝ չկարողնալով դիմակայող մրցակցությանը դուրս են մղվում մրցակցությունից: Պետության կողմից տրամադրվող արտոնություններն, ինչպես նաև տարբեր ծրագրերը կօգնեն ՓՄՁ-ներին ամրապնդել իրենց դիրքերը տնտեսությունում՝ ստեղծելով ավելի մեծ հավելյալ արժեք:

Օտարերկրյա ներդրողները կարող են օգտվել հետևյալ ներդրումային առավելություններից.

1.Կարող են տիրապետել բաժնետոմսերի 100% -ին:

2. Ներդրումների համար հատուկ թույլտվություններ չեն պահանջվում:

3. Չնայած այն հանգամանքին, որ օտարերկրյա քաղաքացիները չեն կարող հող ունենալ Հայաստանում, նրանց առաջարկվում է երկարաժամկետ վարձակալության պայմանագրեր:

4.Ներդրումային ծրագրերի համար ներմուծվող ավելի քան 300 միլիոն դրամ կազմող ապրանքների ԱԱՀ-ի վճարումները հետաձգվում են երեք տարով:

5. Արտահանման տուրքեր և սահմանափակումներ չկան:

---

[93] https://www.doingbusiness.org/
[94] https://www.smednc.am/

6.Հայաստանը կիրառում է զրոյական սակագին «Ազատ շրջանառության» և «վերաարտահանման» մաքսային ռեժիմների շրջանակներում արտահանվող ապրանքների և ծառայությունների վրա:

7. Օրենքում փոփոխություններ կատարելու դեպքում օտարերկրյա ներդրողները կարող են ընտրել, թե որ օրենքն օգտագործվի՝ մինչև հինգ տարի ժամկետով:

9. Գործում է արտարժույթի ազատ փոխանակում:

10. Դրամական փոխանցումների սահմանափակումներ չկան:

11. Ներդրումների համար ոլորտային կամ աշխարհագրական սահմանափակումներ չկան:

Կարծում եմ ներդրումների ներգրավման ՀՀ հիմնական առավելություններից մեկը որակյալ աշխատուժն է, ինչը ներդրողներին հնարավորություն կտա, մրցակից ընկերությունների համեմատ ցածր աշխատավարձ վճարելով՝ ապահովել արտադրանքի ցածր ինքնարժեք և գնային մրցունակություն՝ հատկապես միջազգային շուկայում իրենց արտադրանքը ներկայացնելիս:

ՀՀ-ում ներդրումների համար շահավետ ոլորտներն են հանդիսանում՝

- Բարձր տեխնոլոգիաների էլեկտրոնիկայի նախագծումը,
- Հանքարդյունաբերությունը և մետալուրգիան,
- էլեկտրական էներգիայի համակարգերը,
- Քիմիական արտադրությունը,
- թեթև արդյունաբերությունը,
- բանկային ծառայությունները,
- համակարգչային ծրագրային ապահովման մշակումը,
- սննդի արտադրությունը և փաթեթավորումը,

- զբոսաշրջությունը[95]:

Հայաստանի ներդրումային միջավայրի առավելություններն են.

- Արագ աճող տնտեսություն:
- Դյուրին մուտք ԱՊՀ և Միջին Արևելքի շուկաներ:
- Լավ կրթված, հմուտ և դյուրին վերապատրաստվող աշխատուժ:

Մեր կարծիքով ներդրումային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար հարկավոր է.

- Առանձնացնել ներդրողների խմբերը ու նրանց նկատմամբ խրախուսման միջոցները՝ յուրաքանչյուր խմբի առանձնահատկություններն առավելագույնս հաշվի առնելու նպատակով,
- ՕՈՒՆ-ի ներգրավման քաղաքականության մասը դարձնել նորարարարական տեխնոլոգիաների ներդրման խրախուսումը, հատկապես՝ պետական ձեռնարկությունների վաճառքի դեպքում,
- Բարձրակարգ հետներդրումային ծառայություններ մատուցել գործող ներդրողների համար, քանի որ ՀՀ ներդրումային միջավայրի վերաբերյալ վերջիններիս դրական կարծիքը, նպաստում է ստացված եկամուտների վերներդրման ծավալների աճին ու կարևոր գործոն է հանդիսանում պոտենցիալ ներդրողների ներգրավման համար,
- Ձեռնարկել գործողություններ՝ ուղղված ներքին և միջպետական մակարդակով օտարերկրյա ներդրողների շահերի պաշտպանության համար իրավական դաշտի ստեղծմանը, քաղաքական ռիսկերի հնարավոր բացասական ազդեցությունը նվազեցնելու համար,
- Ներկայացնել ՀՀ ներդրումային միջավայրի մասին ամբողջական տեղեկատվություն գործող ու պոտենցիալ ներդրողներին (անգլերենով օրենքների, շուկայական և այլ նյութերի վերլուծություն),

[95] http://www.ysu.am/files/SSS_Journal_New_7,%20pp.76-82.pdf

- Կիրառել ակտիվ հակամենաշնորհային քաղաքականություն պետական մակարդակով,
- Քայլեր մշակել՝ երկրում կոռուպցիայի մակարդակի նվազեցման ուղղությամբ:

Մեր կարծիքով այս խնդիրների իրագործումը հնարավորություն կտա ոչ միայն մեծացնել ներդրումների ծավալները, այլև բարձրացնել վերջիններիս արդյունավետությունը, որը կարևոր նախապայման է մեր երկրի զարգացման համար: Ներդրումների ծավալների աճը կնպաստի ՀՀ համաշխարհային մրցունակության դիրքերի բարձրացմանը և ՀՀ գործարար միջավայրի միջազգայնացմանը:

## Օգտագործված գրականության ցանկ


***Օրենքներ և այլ իրավական ակտեր***

1. ՀՀ Կառավարության ծրագիր, 2019
2. ՀՀ օրենքը Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին, 2000 թ նոյեմբերի 6
3. ՀՀ օրենքը Հարկերի մասին, 14 ապրիլի 1997 թ.

***Գրականություն***

4. Յու. Մ. Սուվարյան, Զբոսաշրջության մրցունակությունը և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում. Երևան <<Տնտեսագետ>> հրատարակչություն, 2014 թ.
5. Մանասյան Ա. Վ., ՀՀ գործարար միջավայրի մրցակցային ռազմավարության նոր մոդել
6. Շահբազյան Կ. Խ. , Ներդրումային միջավայրի բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Սեղմագիր, Երևան 2013
7. Յու. Մ. Սուվարյան , Մրցունակությունը և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում 2012–2013 ԹԹ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն
8. Գալստյան Գևորգ,Գործարար միջավայրի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2018
9. Հայաստանի ազգաին մրցունակության զեկույց 2019, Աշխատատեղերի ապագան Հայաստանում, Ի-Վի Քոնսալթինգ, <<Տնտեսություն և արժեքներ>> հետազոտական կենտրոն,2019
10. Գործարար միջավայրը բնութագրող ցուցանիշները երկրների տարբեր խմբավորումների համար, Աշոտ Մարկոսյան, Բորիս Ավագյան

11. Դրամբյան Ա. Գ., Գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցության կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Սեղմագիր, Երևան 2017
12. ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու,    Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015
13. БалацкийЕ., Павличенко «Иностранныеинвестицииизкономическийрост» #1, Москва 2002г.
14. Понятиеконкурентоспособности, конкурентоспособностьорганизации: Д. И. Долгов, М. С. Кижайкина
15. Предсказание на основе расчета конкурентоспособность экономики: от оценки к методике, Завьялова Т.А. , 2011
16. KPMG, Armenia, Great country Smart opportunites
17. Kelly Olds . The Economic History of  Taiwan
18. Doing Business 2020, Comparing Business Regulation in 190 Economies, World Bank Group
19. Doing Business 2019, Comparing Business Regulation in 190 Economies, World Bank Group
20. Doing Business 2020, Starting a Business Questionary, World Bank Group
21. World Bank Group
22. Global Competitiveness Report 2019

***Համացանցային կայքեր***

23. www.gov.am
24. www.ondd.be/
25. www.armstat.am/am/
26. www.smednc.am/
27. www.mfa.am/hy/business/
28. www.cba.am

29. www.mineconomy.am/
30. www.investinarmenia.am/ru/
31. www.investinarmenia.am/ru/
32. www.focus-economics.com/countries/israel
33. www.kpmg.am
34. www.heritage.org
35. www.ehorussia.com
36. www.unctad.org/en
37. www.businessdictionary.com
38. www.grandars.ru
39. www.inventech.ru
40. www.doingbusiness.org
41. www.toppr.com
42. www.study.com
43. www.myaccountingcourse.com
44. www.studref.com
45. www.doingbusiness.org/ru

# Հավելվածներ

Հավելված 1

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2013 թվականի ծրագիրը.[96]

| Առաջարկվող միջոցառումը | Նպատակը |
|---|---|
| Հարկային ոլորտի բարեփոխումներ<br>• Կազմակերպությունների մասով հողի հարկի և գույքահարկի հաշվարկները ներկայացնելու պահանջի վերացման նպատակահարմարության քննարկում և, ըստ անհրաժեշտության, համապատասխան օրենսդրական նախագծերի մշակում<br>• Հարկ վճարողների համար դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորության ապահովում<br>• ՀՀ բոլոր մարզերում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկում<br>• Հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտների ներդրում<br>• . ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում հարկերի վճարման հնարավորության ստեղծում և այլն: | • գույքահարկի և հողի հարկի հաշվետվությունները ներկայացնելու պահանջը վերացնելու միջոցով ժամանակի և ծախսերի կրճատում<br>• տնտեսավարողների կողմից գույքահարկի և հողի հարկի հետ կապված վճարումների վերաբերյալ իրազեկվածության ապահովում, ծախսերի ճշգրիտ արտացոլում հարկային հաշվետվություններում (մասնավորապես, շահութահարկի մասով<br>• դրամարկղային գրքերի վարման ժամկետների կրճատում<br>• հարկային հաշվետվությունները ներկայացնելու համակարգի արդյունավետության բարձրացում<br>• հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, պարտավորությունների կատարման վրա ծախսվող ժամանակի կրճատում և այլն: |

[96] http://moj.am/storage/uploads/gorcarar_mijavayr.pdf

| | |
|---|---|
| Արտաքին առևտրին վերաբերող բարեփոխումներ<br>• Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 58-րդ հոդվածի լիարժեք կիրարկումն ապահովելու և ֆիզիկական անձանց կողմից առանձին ապրանքների և միջազգային փոստային առաքումների միջոցով տեղափոխվող ապրանքների տեղափոխման գործընթացը կրճատելու նպատակով ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում<br>• Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 224-րդ հոդվածում փոփոխությունների կատարում, որի համաձայն վերցված ապրանքները կվերադարձվեն տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում<br>• Ներմուծման և արտահանման ժամանակ ներգրավված բոլոր մարմինների համար ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել իրենց գործունեության վայրերից և աշխատանքային ժամերից դուրս ծառայությունների մատուցման միասնական կարգ և այլն: | • պարզեցված և հստակ ընթացակարգերի սահմանում<br>• մաքսային հսկողության ժամկետների և գործընթացների պարզեցում<br>• միջազգային մաքսային կառույցներին Հայաստանի Հանրապետության անդամակցության ապահովում<br>• մաքսային ձևակերպումների արագացում<br>• մաքսային և այլ ձևակերպումների գործընթացի պարզեցում, արտաքին առևտրի խթանում և այլն: |
| Ընկերության հիմնադրման հետ կապված բանեփոխումներ | • բաժնետիրական ընկերությունների գրանցման |

| | |
|---|---|
| • Բաժնետիրական ընկերությունների էլեկտրոնային գրանցման հնարավորության ապահովում<br>• E-registry համակարգի միջոցով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կանոնադրության և այլ փոփոխությունների (վերակազմավորում, լուծարում և այլն) իրականացման հնարավորության ստեղծում<br>• E-registry կայքի տեղեկատվության մասին՝ անգլերենով և ռուսերենով հասանելիության ապահովում և այլն: | ժամանակի և գործընթացների կրճատում<br>• քաղաքացիների և պետական մարմինների միջև շփումների ու փաստաթղթային պահանջի նվազեցում, փոփոխությունների գրանցման ժամկետների և ծախսերի կրճատում, գործընթացների պարզեցում<br>• օտարերկրյա տնտեսավարողներին մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովում, օտարերկրյա ներդրումների խթանում |
| Շինարարական թույլտվություններ<br>• Հաճախ օգտագործվող ՓՄՁ ենթակառուցվածքի համար օրինակելի նախագծերի մշակում (պահեստներ, սննդի, մանրածախ առևտրի օբյեկտներ և այլն), հրատարակում և տեղադրում ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում և այլն: | • անհատ և կորպորատիվ ձեռնարկատերերին հաստատված նախագծերի տրամադրում՝ դրանց հիման վրա պարզեցված ընթացակարգով շինարարություն իրականացնելու համար: Նախագծային փաթեթում ներառել ՀՀ ֆինանսների նախարարության գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոնի կողմից հրապարակվող տեղեկատվական տեղեկագրում ներառված շինարարական նյութերի միջինացված գներով հաշվարկված մի շարք բնորոշ օբյեկտների շինարարության արժեքը |

| | |
|---|---|
| | • էլեկտրաէներգիայի, գազի և ջրի միացման համար անհրաժեշտ ժամկետների կրճատում |
| Էլեկտրականության միացում<br>• Էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման և մատակարարման պայմանագրերի կնքման էլեկտրոնային համակարգի ներդման ժամկետների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և այլն: | • էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման համար անհրաժեշտ գործընթացներում էլեկտրոնային համակարգի ներդրում<br>• էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման ժամկետների և գործընթացների կրճատում |
| Պայմանագրերի կիրարկում<br>• Պայմանագրերից ծագող վեճերի լուծման համար անհրաժեշտ գործընթացների վերաբերյալ առնվազն երեք անգամ սեմինար քննարկումների կազմակերպում՝ մանրամասն ներկայացնելով վեճերի լուծման համար անհրաժեշտ բոլոր քայլերը և ծախսերը և այլն: | • պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործընթացների, ժամկետների ու ծախսերի կրճատում և իրազեկման մակարդակի բարձրացում<br>• պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործընթացների, ժամկետների կրճատում և իրազեկման մակարդակի բարձրացում<br>• պայմանագրերի կիրարկման ժամկետների կրճատում |
| Վարկերի ստացում<br>• Դեբիտորական պարտքի և այլ ակտիվների ընդհանուր նկարագրով գրավադրման հնարավորության ուսումնասիրում և անհրաժեշտության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կամ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերում | • վարկերի հասանելիության բարձրացում |

| | |
|---|---|
| համապատասխան փոփոխությունների կատարում և այլն: | |
| Ներդրողների պաշտպանվածություն<br>• Շահագրգռվածության առկայությամբ իրականացված խոշոր գործարքների (տնտեսական գործունեության) բացահայտման մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև տնօրենների պատասխանատվության ընդլայնման նպատակով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում, որի համաձայն կսահմանվեն՝ 1) նախքան շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքումն անկախ աուդիտորի եզրակացության տրամադրման պահանջ. 2) շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին տեղեկատվությունը www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու պահանջ. հրապարակման գինը՝ ոչ ավելի, քան 5000 դրամ. 3) օրենքի խախտմամբ շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու համար գործադիր մարմնի կողմից | • ընկերություններում թափանցիկության մակարդակի, փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության աստիճանի բարձրացում |

| | |
|---|---|
| դատարան դիմած բաժնետիրոջը տուգանք վճարելու պահանջ և այլն: | |

Հավելված 2

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալներն ըստ երկրների (մլն դրամ) [97].

| | 2018 թ. Հունվար-սեպտեմբեր | | 2019 թ. Հունվար-սեպտեմբեր | | Բացարձակ փոփխությունը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Զուտ հոսքեր | | Զուտ հոսքեր | | | |
| | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ |
| Ընդամենը | -441.0 | 61348.7 | 128350.9 | 32608.2 | 128791.9 | -28.740.5 |
| Այդ թվում՝ | | | | | | |
| Ջերսի | 20640.0 | 20640.0 | - | - | -20640.0 | -20640.0 |
| Ռուսաստանի Դաշնություն | 9616.6 | 11718.2 | 61669.9 | 4892.0 | 52.053.3 | -6826.2 |
| Լիբանան | 9550.3 | 3446.3 | -7560.3 | -7426.0 | -17110.6 | -10872.3 |
| Միացյալ Նահանգներ | 1879.5 | 1786.2 | 341.7 | -997.4 | -1537.8 | -2783.6 |
| Կանադա | 805.8 | - | -695.5 | - | -1501.3 | - |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 774.6 | 779.4 | 837.2 | 821.7 | 62.6 | 42.3 |
| Իռլանդիա | 733.2 | 598.9 | - | - | -733.2 | -598.9 |
| Կուբա | 510.2 | 510.2 | 812.0 | 812.0 | 301.8 | 301.8 |
| Շվեյցարիա | 480.4 | 408.2 | 1988.0 | 1818.1 | 1507.6 | 1409.9 |
| Լյուքսեմբուրգ | 382.3 | -1026.0 | 4478.1 | 464.2 | 4095.8 | 1490.2 |
| Հունգարիա | 209.4 | -27.4 | 6.2 | 25.1 | -203.2 | 52.5 |

[97] https://www.armstat.am/file/article/sv_10_19a_420.pdf

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուկրաինա | 113.6 | 113.6 | -49.4 | -49.4 | -163.0 | -163.0 |
| Վրաստան | 113.4 | - | -744.7 | -1069.8 | -858.1 | -1069.8 |
| Բելառուս | 101.3 | 0.1 | -0.1 | -0.1 | -101.4 | -0.2 |
| Բելգիա | 29.7 | 5.1 | 0.6 | -9.3 | -29.1 | -14.4 |
| Միացյալ Թագավորություն | 16.5 | 1312.9 | -3669.2 | -1248.5 | -3685.7 | -2561.4 |
| Սլովենիա | 14.3 | 14.3 | 15.0 | 15.0 | 0.7 | 0.7 |
| Միջազգային կազմակերպություններ(Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ) | - | - | -838.3 | -238.0 | -838.3 | -238.0 |

Հավելված 3

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերն ու պաշարներն ըստ երկրների, 2019թ. սեպտեմբերի վերջի դրությամբ (մլն դրամ)[98].

| | Համախառն հոսքեր | | | | Մաքուր պաշարներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը ներդրումներ | Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ | տեսակարար կշիռը, % | | Ընդամենը ներդրումներ | Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ | տեսակարար կշիռը, % | |
| | | | Ընդամենը ներդրումներ | Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ | | | Ընդամենը ներդրումներ | Այդ թվում՝ ուղղակի ներդրումներ |
| Ընդամենը | 9652513.5 | 4378852.7 | 100.00 | 100.00 | 2607206.8 | 2104783 | 100.00 | 100.00 |
| Այդ թվում՝ | | | | | | | | |
| Ռուսաստանի Դաշնություն | 3504917.7 | 2140485.9 | 36.31 | 48.88 | 1145619.1 | 931554.2 | 43.94 | 44.26 |
| Գերմանիա | 133922.8 | 231518.0 | 13.88 | 5.29 | 138677.4 | 87566.2 | 5.32 | 4.16 |
| Կիպրոս | 653840.3 | 112412.7 | 6.77 | 2.57 | 72494.4 | 41110.1 | 2.78 | 1.95 |
| Ֆրանսիա | 537074.0 | 467497.5 | 5.56 | 10.68 | 80973.1 | 80134.1 | 3.11 | 3.81 |
| Նիդերլանդներ | 567842.3 | 32900.4 | 5.88 | 0.75 | 123835.5 | 123184.4 | 4.75 | 5.85 |
| Կանադա | 441537.6 | 60144.1 | 4.57 | 1.37 | 4428.9 | 1456.5 | 0.17 | 0.07 |
| Միացյալ Թագավորություն | 412587.3 | 94048.9 | 4.27 | 2.15 | 113408.9 | 88884.2 | 4.35 | 4.22 |

[98] https://www.armstat.am/file/article/sv_10_19a_420.pdf

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արգենտինա | 311877.3 | 169776.8 | 3.23 | 3.88 | 157387.5 | 116768.9 | 6.04 | 5.55 |
| Լիբանան | 313397.3 | 121942.6 | 3.25 | 2.78 | 77753.9 | 74568.9 | 2.98 | 3.54 |
| Լյուքսեմբուրգ | 253297.2 | 119664.6 | 2.62 | 2.73 | 106929.9 | 23217.0 | 4.10 | 1.10 |
| Միացյալ նահանգներ | 222783.7 | 126641.2 | 2.31 | 2.89 | 77790.1 | 72553.7 | 2.98 | 3.45 |
| Հունաստան | 196125.9 | 123581.5 | 2.03 | 2.82 | 133.4 | 133.4 | 0.01 | 0.01 |
| Ջերսի | 138647.4 | 138647.4 | 1.44 | 3.17 | 179803.8 | 179803.8 | 6.90 | 8.54 |
| Շվեյցարիա | 132206.3 | 94999.6 | 1.37 | 2.17 | 12003.9 | 11521.4 | 0.46 | 0.55 |

Հավելված 4

Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի բաշխվածությունն ըստ գործունեության տեսակի (մլն դրամ) [99].

| Գործունեության տեսակը | 2018 թ. Հունվար-սեպտեմբեր | | 2019 թ. Հունվար-սեպտեմբեր | |
|---|---|---|---|---|
| | Զուտ հոսքեր | | Զուտ հոսքեր | |
| | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ |
| Ընդամենը | -441.0 | 61348.7 | 128350.9 | 32608.2 |
| Այդ թվում՝ | | | | |
| Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ | 995.7 | 1757.0 | 942.5 | 956.7 |
| Ձկնորսություն և ձկնաբուծություն | - | - | -125.9 | -125.9 |
| Մետաղական հանքաքարի արդյունահանում | -99228.5 | 21.4 | 1645.4 | 1601.0 |
| Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր | -32613.7 | 10969.2 | 16355.6 | 4373.0 |
| Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն | 20925.9 | 20974.4 | - | - |
| Սննդամթերքի արտադրություն | 361.5 | 511.4 | 809.5 | 809.5 |
| Խմիչքների արտադրություն | 3249.8 | 2708.7 | 256.2 | -3002.2 |

[99] https://www.armstat.am/file/article/sv_10_19a_420.pdf

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 813.5 | - | -699.0 | - |
| Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն | 2.5 | 2.5 | 2.0 | 2.0 |
| Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն | - | - | -174.9 | -174.9 |
| Դեղագործական արտադրանքի արտադրություն | - | - | -238.0 | -238.0 |
| Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | -89.5 | -89.5 | -600.4 | - |
| Հիմնական մետաղական արտադրություն | 3308.0 | 5186.2 | -14605.9 | -7533.0 |
| Էլեկտրական սարքավորումների արտադրություն | -8.3 | -3.5 | 98.0 | 82.5 |
| Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն | -119.4 | -119.4 | -44.0 | -44.0 |
| Մեքենաների և սարքավորումների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում | -40.4 | -40.4 | -37.0 | -37.0 |
| Այլ ներդրումներ | | | | |